

ԱՐՄԵՆ ԶԱՅԱՆԱ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ



ՏԱՄԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

ԿԱՍ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊՈՐՏԱՅՈՒՅՑ



ՀՐԱՄԱՆԱԻ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

S. S. ԳԱՐԵԳՆԻ Բ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

CATHOLICOSATE OF ALL ARMENIANS

PRIEST ARSEN BAGRATOUNI

THE TEN COMMANDMENTS
OR
MORAL DUTIES

Publishing House of Mother See of Holy Etchmiadzin
Holy Etchmiadzin - 2022

КАТОЛИКОСАТ ВСЕХ АРМЯН

СВЯЩЕННИК АРСЕН БАГРАТУНИ

ДЕСЯТЬ ЗАПОВЕДЕЙ
ИЛИ
МОРАЛЬНЫЕ ОБЯЗАННОСТИ

Издательство Первопрестольного Святого
Эчмиадзина
Св. Эчмиадзин - 2022

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՐՄԵՆ ՔԱՀԱՆԱ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

ԿԱՄ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱՅՈՒՅՑ



ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Բ 135

*Տպագրվում է երաշխադրությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի*

*Արևելահայերենի վերածեց՝
Տ. Գաբրիել քահանա Վարդանյանը*

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՐՍԵՆ ՔԱՀԱՆԱ

Բ 135 ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ ԿԱՄ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐ-
ՏԱՅՈՒՅՑ / Արսեն քահանա Բագրատունի.– Սուրբ
Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատա-
րակչություն, 2022.– 128 էջ:

Գրքույկում հանրամատչելի կերպով բացատրվում են Տասը Պատվիրանները՝ որպես մարդու՝ հասարակական էակի, կյանքի համառոտ բարոյական պարտացույց: Գրքույկն ունի բարոյա-խրատական և քարոզչական բովանդակությունը: Հեղինակը թեև մանրամասնորեն չի խոսում մարդու պարտավորությունների ուրույն հատվածի մասին, բայց նայնպես՝ օգտվել ցանկացող հավատացյալն այս գրքույկի բովանդակությամբ կարող ամբարել հոգևոր գիտելիքներ մարդ-Աստված և մարդ-մարդ հարաբերությունների ճիշտ հարաբերությունների վերաբերյալ՝ արգասավորելով իր մտքի անդաստանը:

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-59-294-7

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2022 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Իսրայելացիները, ինչպես հայտնի է, Եգիպտոսում գերության մեջ են մնում 430 տարի: Սակայն երբ իսրայելացիների նկատմամբ ճնշումը հասնում է իր գագաթնակետին, Աստված նրանց աջակցում է՝ փարավոնին և եգիպտացիներին հասցնելով տասը աղետները, որպեսզի իսրայելացիներին ազատ արձակի՝ արտոնելով վերադառնալ իրենց երկիր: 600.000 մարդ (չհաշված երեխաներին) մեկնում է ստրկության վայրից և ուղղվում դեպի Խոստացված երկիր, որը նրանց համար մատնանշել էր Աստված: Անապատով անցնելու ողջ ընթացքում Տերը բազում հրաշագործություններով Մովսեսի միջոցով հայտնում է Իր գոյությունը և զորությունը:

Ելքից հետո երրորդ ամսում իսրայելացիները հասնում են Սինայի անապատ և բանակ դնում լեռան դիմաց: Աստված Մովսեսին լեռան վրայից կանչում է և նրան հրահանգում ժողովրդին փոխանցել հետևյալը.

ա. հիշեցնել ժողովրդին Իր սիրո ու հոգատարության մասին,

բ. նրանց առաջարկում է Սինայում Իր հետ Ուխտ կնքել (ինչպես Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ), որի միջոցով խոստանում է նրանց դարձնել Իր համար ընտրյալ ժողովուրդ, թագավորություն, քա-

հանայություն և սուրբ ազգ՝ այն նպատակով, որ իսրայելի ժողովուրդը լինի աստվածային Հայտնության և Աստծու օրհնության փոխանցման կամուրջը ողջ աշխարհում: Սակայն անհրաժեշտ նախապայման էր, որ իսրայելացիները պահեին տրված պատվիրանները և իր հետ կնքած Ուխտը (Ելք ԺԹ): Իսրայելացիները համաձայնում և պատասխանում են. «Այն ամենը, ինչ ասել է Աստված, կկատարենք ու կինազանդվենք» (Ելք ԺԹ 8):

Այդ ժամանակվանից տասը պատվիրանները, որոնք Մովսեսի միջոցով փոխանցվեցին ժողովրդին, կոչվեցին նաև «Աստծու Օրենք»: Այդ տասը պատվիրանները մարդկանց տրված՝ Աստծու ամենաթանկարժեք նվերն էր և է: Առաջին չորս պատվիրանները վերաբերում են Աստծու և մարդկանց միջև եղած հարաբերությանը, իսկ մնացյալ վեցը՝ մարդկանց միջև եղած հարաբերություններին:

Կարող ենք ասել, որ Աստծու առաջին համակարգված Հայտնությունը մարդկանց Տասնաբանյա պատվիրաններն էին, որը ողջ Հին Կտակարանի կենսաբեր պարունակությունն է: Տասնաբանյա պատվիրանները հայտնում են ճշմարիտ պաշտամունքն ու կրոնը և միշտ կլինեն անհրաժեշտ, եթե ցանկանում ենք մարդկանց միջև ձևավորել ճշմարիտ հարաբերություն և ստեղծել մարդկային ճշմարիտ հասարակություն: Քանի որ Աստծու օրենքները մեզ ոչ թե կաշկանդում են, այլ ազատում են և օրհնում: Մեզ պաշտպանում են ապականությունից և անկումից: Տասնաբանյայի կանոնները կարգավորում են Աստ-

ծու և մարդկանց միջեւ եղած գլխավոր և հիմնական հարաբերությունները: Այս տասը կանոնագույն և հիմաքարային պատվիրանները, որոնք Սինայում Մովսեսի միջոցով տրվեցին, այդ ժամանակվանից ամրապնդում են մարդկանց բարոյական կյանքը: Եթե բոլորն այս պատվիրանները պահեին, անշուշտ գոյություն չէին ունենա դատարանները, ոստիկանությունը, բանտերը, կնվազեին հիվանդությունները, ամուսնալուծությունները, պատերազմները և այլն:

Սակայն, հիմնականում, տասը պատվիրանները նախապատրաստում են մարդկությանը ընդունելու Հիսուս Քրիստոսի միջոցով ամբողջական Հայտնությունը, որն Իր եզակի վարդապետությամբ, հրաշքներով, զոհաբերությամբ և Հարությամբ մարդկությանը շնորհեց ամբողջական ճշմարտությունը: Եվ բոլորովին պատահական չէ, որ մեր Տիրոջ Լեռան քարոզը շատ հայրեր համեմատում են Հին Կտակարանի տասը պատվիրանների հետ:

Կարևոր է նշել նաև, որ Տասնաբանյա պատվիրանները հանդիսացել են նորադարձների հավատուսուցման և Եկեղեցու բարոյականության ուսուցման հիմքը:

* * *

Իր գրքույկում¹, որը ներկայացնում ենք արդի արևելահայերենով, հեղինակը՝ Տ. Արսեն քին. Բագրատունին, հանրամատչելի կերպով բացատրում է

¹ Տե՛ս **Արսէն քահանայ Բագրատունի**, *Տասը Պատգամք կամ բարոյական պարտւոսոյց*, Տփղիս, 1881:

տասը պատվիրանները՝ որպես մարդու՝ հասարակական էակի, կյանքի համառոտ բարոյական պարտացույց: Գրքույկն ունի բարոյախրատական և քարոզչական բովանդակություն: Հեղինակը թեև մանրամասնորեն չի խոսում մարդու պարտավորությունների ուրույն հատվածի մասին, բայց ևայնպես՝ օգտվել ցանկացող հավատացյալն այս գրքույկի բովանդակությամբ կարող է ամբարել հոգևոր գիտելիքներ մարդ–Աստված և մարդ–մարդ զույգերի ճիշտ հարաբերությունների վերաբերյալ՝ արգասավորելով իր մտքի և հոգևոր կյանքի անդաստանը:

Գրքույկի գրության գլխավոր պատճառը եղել է իշխանուհի տիկին Կատարինե Բեհբուդյանցը՝ Ղորղանյանց տոհմից, որը, քանիցս ներկա գտնվելով հեղինակի քարոզներին, ցանկություն է հայտնել իր դստեր համար ունենալ տասը պատվիրանների հանրամատչելի բացատրությունը, որը և հեղինակը, ընդառաջ ներկայացված խնդրանքի, կյանքի է կոչել՝ ի շահ հավատացյալների հոգևոր և բարոյանական կյանքի կերտման:

Գաբրիել քին. Վարդանյան

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխպետույց

08 դեկտեմբերի 2022 թ.

Ս. Էջմիածին

ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

ԿԱՄ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱԳՈՒՅՑ



ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Շատ հաճախ զարմանում ենք, թե ինչո՞ւ է մեր հասարակական կյանքը բոլորովին հակառակ ընթանում խղճի կանոններին ու աստվածային օրենքներին, ինչո՞ւ է հասարակական էակը՝ մարդը, իր շրջապատը կառուցում սոսկ անձնական շահերի հիման վրա, որի հետևանքով զրկանքի է ենթարկում իր ընկերոջը: Եվ վերջապես, ինչո՞ւ է ճշմարտության ձայնն ամբողջովին խեղդվում այդ մարդու սրտի ու հոգու մեջ, և սուտն ու շողոքորթությունն են բարձրաճակատ պարծենում կյանքի բոլոր ասպարեզներում:

Միայն զարմանում ենք և այդքանով բավարարվում: Իսկ երբեմն էլ մեր զարմանքի պատճառը համարելով կյանքի անդիմադրելի հոսանքը՝ անփոփոխ ենք մնում մեր կենցաղավարության բոլոր ոլորտներում՝ դժվարին կամ անհնարին համարելով այդ հոսանքին դիմագրավելը: Այո՛, դժվար է. գուցե և բազում զոհողություններ են պահանջվում՝ կյանքի հոսանքին դիմագրավելու և հաղթության պսակին արժանանալու համար: Սակայն, ինչո՞ւ մի փոքր չենք խորհրդածում ու համոզվում, որ ո՛չ ժամանակն է մեղավոր, ո՛չ ժամանակի հոսքը, և մարդու կյանքի ապականության պատճառը դրանք չեն, այլ հանցավոր է ժամանակի տերն ու այն գործադրողը, որ է մարդը:

Եթե մարդը՝ այդ վսեմ ու իմաստուն էակը, իր տիեզերածավալ հանճարով ձգտում է քննել երկինքն ու

երկիրը, ինչպես որ վկայում է նաև Ավետարանական ճշմարտությունը, թե. «Կեղծավորներ, երկնքի և երկրի երևույթները քննել գիտեք, իսկ այս ներկա ժամանակը ինչպե՞ս չեք քննում: Ինչո՞ւ դուք անձնապես արժանին չեք ընտրում» (Ղուկ. ԺԲ 56), ուրեմն ինչո՞ւ այդ նույն սքանչելի էակը՝ մարդը, իր անսահման հանճարով չի կարողանում կամ, ավելի ճիշտ, չի ձգտում հաղթել ժամանակին, դիմադրել նրա խրոխտ ընթացքին, այսինքն՝ իր իսկ կյանքի վնասակար ու թերի կողմերին:

Հիրավի, մի՞թե այդ իմաստուն և խոհեմ էակի վսեմ հանճարի անսահմանությունը միայն այն բանի համար է, որ խոտոր ճանապարհներով ձեռք բերած անձնական շահավետությունն ու օգուտները մշտապես և անպայմանորեն գերադասի հասարակական շահից: Մի՞թե մարդու այդ հզոր հանճարին նպատակ է դրոշմված և սահմանում է դրված՝ հափշտակելու և զրկելու ընկերոջը՝ ճոխ հարստություն ձեռք բերելու համար: Ո՛չ և ո՛չ. բնավ դա չէ մարդու հանճարի նպատակակետը, դա չէ նրա կոչումն աշխարհում, սակայն մարդը, առանց իր կոչումը քննելու, մշտապես շարժվում է այդ հարստահարող ուղղությամբ՝ օրեցօր առաջադիմելով գազանային ունակությունների մեջ, մոռանալով իր բարձր դիրքը, որ ունի բոլոր արարածների մեջ: Սա հաստատում է նաև Դավիթ մարգարեն. «Մարդը պատիվ ուներ՝ և չհասկացավ, հավասարվեց անբան անասուններին ու նմանվեց նրանց» (Սաղմ. ԽԸ 13): Սույնպիսի մի դատավճիռ լսում ենք նաև Հովհան Ոսկեբերան հայրապետից. «Այնուհետև ո՛չ

թե թունավոր գազանն ու անմիտ անասունն են մեղավոր, այլ՝ բյուրակերպ ու բյուրագույն մարդը»։ Սրանից պարզ հետևում է, որ ոչ թե ժամանակը կամ նրա ընթացքն են մեղավոր, այլ՝ մարդը, որն այդ ժամանակի տերն է։ Հանցավոր է նույն այդ մարդու գործը, որը նրա հափշտակող ու զրկող՝ պարսավելի հատկությունների արգասիքն է։ Իսկ այս ամենի ամբողջությունը արդյունք է և պտուղ՝ Աստվածային օրենքների ու պատվիրանների հանդեպ տգիտության, որոնց մասին գիտության ճշմարիտ մատակարարումը, ցավալիորեն պետք է խոստովանենք, սակավ տեղ ունի ու զանց է առնված մեր հասարակական կյանքում ու ընկերական շրջանակում։ Սա է կրոնի գիտությունը, որը մինչև իսկ մեզանում է արհամարհված։ Այս խոսքերն ասում եմ տխուր վստահությամբ, քանի որ դա իսկ է ճշմարտությունը։

Սա է պատճառը, որ ես մի փոքրիկ զոհողություն արեցի՝ լույս ընծայելու մարդու՝ որպես հասարակական էակի, կյանքի այս համառոտ բարոյական պարտացույցը, որը թեպետ մանրամասնորեն չի խոսում մարդու պարտավորությունների ուրույն հատվածի վերաբերյալ, չի շտկում մարդու կյանքի բոլոր թերությունները և չի տալիս ամեն մի թերի կողմը դարձանելու առանձնահատուկ միջոցները (քանի որ այս աշխատասիրության գլխավոր նպատակն ու սկզբնապատճառը, ինչպես երևում էլ է, եղել է մեկ այլ հանգամանք), բայցևայնպես՝ օգտվել ցանկացողն այս քչով էլ կարող է բավականանալ՝ ամբարելով իր մտքի շտեմարանը բարոյական պարտքերի ցորյանի այն

հատիկներով, որոնք պտղաբեր արգասավորությամբ լցնում են մարդու մտքի անդաստանը՝ ըստ այն խոսքի, թե. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կմնա, իսկ եթե մեռնի, բազում արդյունք կտա» (Հովհ. ԺԲ 24): «Մեռնել» ասելով՝ չպետք է հասկանանք՝ լսել և մոռացության մատնել, կամ՝ անգործության և մոռացության անդունդը գահավիժել, այլ՝ այդ բարոյական պարտավորությունները մսի և արյան փոխակերպել, դրանց բնություն տալ և գործադրել, որպեսզի մեզնից օգուտ ստանա նաև մեր ընկերը:

Իմ այս փոքրիկ երկի գլխավոր սկզբնապատճառը եղել է իշխանուհի տիկին Կատարինե Բեհբուդյանցը՝ Ղորղանյանց տոհմից, որը քանիցս ներկա գտնվելով իմ չնչին քարոզներին՝ ցանկություն հայտնեց իր առաքինակենցաղ Նատալիա դստեր համար ունենալ Տասը պատվիրանների բացատրությունը: Նրա՝ ինձ վրա դրված սույն պարտավորությունը ես խիստ նպատակահարմար համարեցի ու ջանացի ի կատար ածել այն՝ ի լրումն նրա սուրբ փափագների և ի կրթություն սրտակից բարեպաշտների:

Երանի, բյրրւ երանի Հայ կնոջը, եթե նա փափագի նմանվել այս իշխանուհու բարձր ու վսեմ ձգտումներին և օրինակին:

Արսեն քահանա Բագրատունի

ՈՒՂԵՐՁ


Քեզ՝ համեստափայլ հայ օրիորդ Նատալիա Բեհբուդյանց, տալիս եմ իմ այս երկն իբրև անմահական ուղերձ: Քեզ չեմ տալիս ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ, ո՛չ անցողիկ պատիվ ու փառք, այլ՝ բարոյական խոսք: Այն անջնջելիորեն դրոշմի՛ր քո սրտի մարմնեղեն տախտակի վրա և նրա վկայությամբ անսասան ընթացի՛ր կյանքի մթության միջով: Սա է այն Լույսը, որը մեզ տալիս է մեր հավիտենական Բարեկամը՝ Հիսուս, մեր ճշմարիտ Դաստիարակը և մեր կյանքի Սկիզբն ու Վախճանը՝ ասելով. «Ես որպես լույս եկա աշխարհ, որպեսզի ամեն ոք, որ ինձ հավատում է, խավարում չմնա» (Հովհ. ԺԲ 46): Իբրև մանյակ՝ այս երկնային Լույսն անցկացրու քո պարանոցին և այնպես ընթացի՛ր, որ խավարը քեզ չգայթակղեցնի, և քո լուսավոր կյանքի ճառագայթը թող որ ներթափանցի նաև քեզ նման շատ հայ օրիորդների սիրտը, որոնք այդ լույսի կարիքն ունեն:

Երանի՛ քեզ, հայ աղջիկ և քրիստոնյա կույս օրիորդ, որ պատանի հասակումդ՝ քո իմաստուն մոր դաստիարակության ներքո, կարիք զգացիր որոնելու և գտնելու այն Լույսը, որն աշխարհին տվեց մեր բոլորի հարազատ Բարեկամ և սիրելի Հիսուսը: Գտար այդ լույսը՝ երջանիկ ես: Ավելի՛ կերջանկանաս, և ճշ-

մարիտ երջանկության պայծառ պսակը կդրվի քո համեստ ճակատին, երբ այդ Լույսը քո կյանքի անբաժան ընկերը դարձնես և նրանով ընթանաս ներկա ու ապագա կյանքիդ բոլոր ելևէջներում՝ ի փառս քո Բարեկամ Հիսուսի, իբրև մխիթարություն՝ իմաստուն ծնողիդ և որպես բարի օրինակ՝ հայ աղջկա համար:



ԱՌԱՋԻՆ ՊԱՏՎԻՐԱՆ



«Ես եմ քո Տեր Աստվածը, որ քեզ հանեցի Եգիպտացիների երկրից՝ քո ստրկության տնից: Ինձանից բացի՝ այլ աստվածներ թող չլինեն քեզ համար» (Ելք Ի 2-3)

Առաջին պատվիրանը մեզ սովորեցնում է՝ ա. Միայն ճշմարիտ Աստծուն ճանաչել ու հավատալ, պաշտամունք և երկրպագություն մատուցել, ինչպես ասաց Հիսուս՝ իրեն փորձող Չարին. «Պիտի երկրպագես քո Տեր Աստծո՛ւն և միայն նրա՛ն պիտի պաշտես» (Մատթ. Դ 10): Բ. Շնորհակալական զգացմունք է արթնացնում ինչպես հրեաների, այնպես էլ մեր՝ քրիստոնյաներիս մեջ՝ պատվիրելով իբրև փոխհատուցում՝ աստվածային անսահման և գերազույն սիրո համար. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով և քո ամբողջ մտքով» (Մատթ. ԻԲ 37): գ. Օտար «աստվածներ» պաշտելու արգելք է սահմանում. «Օտար աստվածներ մի՛ պաշտեք, նրանց անունները ձեր բերանից չսվեն» (Ելից ԻԳ 13):

Ասելով՝ «Ես եմ քո Տեր Աստվածը», պահանջում է, որ հավատանք իրեն, իր ստեղծագործությանը

և նախախնամությունը, որ տարածվում է մարդկանց վրա: Սա շատ բնական է, որովհետև այնքան ողորմած գտնվեց, որ մեզ ստեղծեց իբրև երկրի տեր և իր Հայրության որդեգիրներ, պարզ է, ուրեմն, որ հանձն կառնեի նաև խնամել մեզ և հոգ տանել մեր մասին. «Արդ, նրանց շնմանվե՛ք, որովհետև ձեր Հայրը գիտե, թե ինչ է ձեզ պետք, նախքան որ դուք նրանից մի բան ուզեք» (Մատթ. 28): Սակայն կան և բազում են այնպիսի մարդիկ, որոնք իրենց կյանքում պատահած դժբախտությունների, անհաջողությունների, հանկարծահաս և տարածամ մահվան և այլ վնասակար դիպվածների մեջ ընկնելու ժամանակ, կարծես, պատրաստվում են մերժել աստվածային նախախնամությունը՝ դրդված իրենց պատուհասած կամ սպառնացող վշտերի ծանրությունից, որոնցից ոչ մի կերպ չեն կարողանում ազատվել: Այո՛, դժվարին է նրանց այդ դրությունն ու կարգավիճակը, սակայն ամենայն խոնարհությամբ և հպատակությամբ ընկնե՛նք Հիսուսի խաչի առաջ, որ իր ուսերի վրա դրած՝ տանում էր դեպի Գողգոթա, և լսե՛նք Նրա խոսքերն ու աշակերտենք Նրա համբերատարությանը. «Երուսաղեմի՛ դուստրեր, ինձ վրա լաց մի՛ եղեք, այլ լա՛ց եղեք ձեզ և ձեր որդիների վրա, որովհետև օրեր պիտի գան, երբ մարդիկ պիտի ասեն՝ «Երանի՛ չբեր կանանց և նրանց, որոնք բնավ չծնեցին և չդիեցրին»: Այն ժամանակ

մարդիկ պիտի սկսեն ասել լեռներին, թե՝ ընկե՛ք մեզ վրա, և բլուրներին, թե՝ ծածկեցե՛ք մեզ, որովհետև, երբ դալա՛ր փայտին այսպես անեն, չորի՛ն ինչ կպատահի» (Ղուկ. ԻԳ 28-32):

Պարզ խրատ և մեծ հույս է մեզ համար. եթե Հիսուսի անճառելի և անհաս բարոյությունների հանդեպ փոխհատուցումն այս եղավ, ապա ուրեմն ի՞նչ ենք ակնկալում մենք. չէ՞ որ ցավ ու վիշտ է մեր կյանքն այս աշխարհում: Մեջբերենք այստեղ մի քանի վկայություններ Սբ. Գրքից, նախ՝ իբրև հաստատում մեր խոսքերի, և երկրորդ՝ իբրև հույսի և մխիթարության միջոց ու առիթ՝ վշտացյալների համար. «Մնվեցի խանձարուրի և հոգսերի մեջ» (Իմաստ. Սող. է 4), «Փորձություն չէ՞ միթե երկրի վրա կյանքը մարդու. վարձկանի օրական վարձը չէ՞ կյանքն իր: Ինչպես որ ծառան է վախենում տիրոջից ու պահվում ստվերում, կամ ինչպես վարձկանն է սպասում իր վարձին, այնպես էլ ես զուր եմ սպասել ամիսներ: Ցավագին գիշերներ են բաժին ընկել ինձ. թե քնեմ՝ ասում եմ. «Ե՛րբ պիտի բացվի լույսը», արթնանամ՝ դարձյալ թե՝ «Ե՛րբ կլինի երեկո»» (Հոբ է 1-4), «Խոնարհ եղեք Տիրոջ առաջ, և նա ձեզ կբարձրացնի» (Հակ. Դ 10), «Հույսո՛վ ուրախացեք. նեղության համբերեցե՛ք» (Հռոմ. ԺԲ 12), «Սպասի՛ր Տիրոջն ու քաջալերվի՛ր, սիրտդ թող ամրապնդվի, Տիրո՛ջն սպասիր» (Սաղմ. ԻԶ 14):

Աստվածային նախախնամության և խորհուրդների վերաբերյալ գաղտնիք կա, որին մենք չպետք է հանդգնենք հասնել մեր քննադատական մտքով, այլ անպայման Նրա մեծ կամքին հպատակվելը պետք է լինի մեր նշանաբանը. այն, ինչը մենք կարծում ենք բարվոք և ցանկանում ենք ունենալ, գուցե ըստ Աստծու՝ չարիք է մեզ համար և վնասակար, որին համբերել անգամ չենք կարող, ուստի՝ Բարերար Աստված մեզ զերծ է պահում դրանից: Նա խնամում է մեզ, բայց Իր խնամելու ձևը և Իր խորհուրդը գաղտնիք է պահում մեզ համար, ինչպես ասում է մարգարեն. «Իմ խորհուրդները նման չեն ձեր խորհուրդներին, և ոչ էլ իմ ճանապարհները՝ ձեր ճանապարհներին,-ասում է Տերը» (Ես. ԾԵ 8): Ուրեմն, հպատակվե՛նք այդ անքնին Աստծուն և բարի Հորը՝ հավատալով, որ Նա խնամում է մեզ և հոգում է մեր կարիքները՝ իբրև Իր զավակների իմաստուն ծնող:

Ավելորդ չէր լինի այստեղ մեջբերել Հովհաննես Հակոբ Ռուսսոյի ճշմարիտ խոստովանությունը Աստծու գոյության և իր հպատակության մասին. «Որքան ավելի շատ եմ փորձում անձովս խորհել Աստծու անսահման իսկությունը, այնչափ նվազ եմ հասկանում, ինձ համար բավական է անգամ, որ Նա գոյություն ունի, որքան քիչ եմ հասկանում, այնչափ ավելի եմ երկրպագում, խոնարհվում նրա առաջ և ասում նրան. «Քո արարածն եմ, ես կամ,

որովհետև Դու կաս, իմ ծագման մասին մտածելիս՝ խորհում եմ Քո մասին, կյանքս կարգավորելու լավագույն միջոցն այն ունայնացնելն է քո առաջ, քո մեծության հանդեպ տկարությունս ընդելուզված տեսնելը հոգուս հիացումն ու սփոփումն է»» (Եմիլիա հատ. Դ)¹: Աստվածային տեսչությանը և նախախնամությանը հավատալ ցանկացողը թող բացի 21, 32, 43-րդ Սաղմոսները և խորհրդածելով կարդա. հույս ունենք, որ օգուտ կբաղի:

Այս մասին Սողոմոնն էլ է խոսում իր Իմաստության գրքի մեջ՝ ասելով. «Քո նախախնամությունն է, Հայր, որ վարում է այն» (Իմաստ. Սող. ԺԴ 3):

Ասելով «որ քեզ հանեցի եգիպտացիների երկրից՝ քո ստրկության տնից»՝ հիշեցնում է հրեաների հանդեպ արած Իր բարիքները և նրանց մեջ երախտագիտության և շնորհակալական զգացում է արթնացնում:

Բայց քանի որ եգիպտացիների երկրից և կամ Փարավոնի ձեռքից հրեական ազգի ազատվելը քրիստոնյաներիս համար խորհուրդ ունի, որ է՝ Հիսուսով ազատությունը անմարմին Փարավոնից, այն է՝ Սատանայի իշխանությունից և ծառայությունից, որին ենթարկվել էինք մեր նախածնողների մեղքով, այդ պատճառով այս խոսքերը նաև մեզ են վերաբերում՝ հիշեցնելով մեզ Հիսուսի չար-

¹ Տե՛ս **Ժան-ժակ Ռուսո**, *Էմիլ կամ դաստիարակության մասին*, Երևան, Հայպետհրատ, 1960, գլ. 4:

չարանքն ու խաչը, որով ազատվելով մեղքերի իշխանի ծառայությունից՝ որդեգրվեցինք Հայր Աստծուն և իրավունք ստացանք Երկնքի արքայության ժառանգորդը լինելու:

Ասելով՝ «Ինձանից բացի՝ այլ աստվածներ թող չլինեն քեզ համար», արգելում է կռապաշտությունը, որովհետև իսրայելացիները, 400 տարի եգիպտացիների մեջ ապրելով, գրեթե յուրացրել էին նրանց ազգային և կրոնական սովորություններն ու ծեսերը և Եգիպտոսից դուրս գալով՝ գնում էին իրենց նախնական հայրենիքը, որն Աստված խոստացել էր իրենց նախահայրերին, և քանի որ այն երկիրը գտնվում էր կռապաշտ ազգերի իշխանության տակ, դրա համար էլ, որպեսզի իսրայելացիները չձուլվեն նրանց և չպաշտեն նրանց «աստվածներին», տվեց այս պատվիրանը, որի նպատակն էր՝ նախ՝ այդ վտանգից զերծ պահել, երկրորդ՝ անպայման ճանաչել տալ Իրեն և հնազանդեցնել:

Այդպես էլ պետք է լիներ, որովհետև Աստված այդ ազգի նախահայր նշանակեց Աբրահամին՝ ասելով «Հեռացի՛ր քո երկրից, քո ցեղից ու քո հոր տնից և գնա՛ այն երկիրը, որ ցույց կտամ քեզ: Քեզ մեծ ցեղի նախահայր պիտի դարձնեմ... Քեզանով պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ժողովուրդները» (Ծննդ. ԺԲ 1-4): Հրեա ազգի կազմավորման հիմքը դրվեց Աբրահամով, և Աբրահամը, հաստատապես

հավատալով աստվածային այդ կանչին, ըստ արժանվույն հետևեց նրան և եղավ նահապետ կամ ազգապետ՝ իրենից սերված մի ազգի, որը Հակոբի անունով կոչվեց Իսրայել: Եվ քանի որ Աստված էր հիմնադրել Իսրայելը, որն Աստծու տված օրենքներով էր առաջնորդվում՝ փրկչի ականկալությամբ, համաձայն որի և կոչվեց աստվածպետական ժողովուրդ, նա պետք է լիովին ճանաչեր իր Տիրոջը և Աստծուն, անպայման միայն Նրա՛ն պիտի հնազանդվեր և միայն Նրա՛ն պիտի պաշտեր հավատարմությամբ՝ տարբերվելով մնացյալ կռապաշտ ազգերից, որոնք բազմաստվածություն էին դավանում: Դա՛ պետք է լիներ միակ աստվածապաշտ ժողովուրդը, որովհետև Աստծու Արքայությունը Աբրահամով սկսվեց, որովհետև նա եղավ հավատի հայր, և նրանից առաջ եկած ազգի մեջ պիտի հայտնվեր Արքայության Տերը և աշխարհի Փրկիչը: Այս պատվիրանը հրամայում է ճշմարիտ կերպով Աստծուն պաշտել և արգելում է սուտ պաշտամունք մատուցել, հրամայում է պաշտել ճշմարիտ Աստծուն և արգելում է պաշտամունք մատուցել չաստվածներին, հրամայում է հավատալ Աստծու գոյությանը, աստվածային նախախնամությանը և ճշմարտություններին, հուսալ Աստծու ամենակարող զորությանը և ապավինել Նրան, միանալ Նրան՝ իբրև մեր կյանքի վերջնանպատակի, սիրել Նրան ամեն բանից առավել, հնա-

զանգվել և խոնարհվել Նրա առաջ և անպայմանորեն հպատակվել Նրան:


Այս պատվիրանն արգելում է աստվածատյացությունը, անհավատությունը և հուսահատությունը՝ ուսուցանելով մեզ աստվածսիրություն, հավատ և հույս, և սա բաժանվում է երկուսի՝ տեսական և գործնական աստվածպաշտության: Տեսական աստվածպաշտություն է հավատը, հույսը և սերը, որով հավատում ենք, թե կա Աստված, սիրում ենք Նրան ամբողջ սրտով և մեր հույսը դնում Նրան վրա՝ իբրև մեր կատարյալ երջանկության և վերջնանպատակի: Գործնական աստվածպաշտությունն այն է, որ երկրպագություն, պաշտամունք, աղոթք, ծնրագրություն ենք մատուցում Նրան և կատարում ենք ընկերասիրության բոլոր պայմանները և աստվածպաշտության բոլոր պարտականությունները, որոնք են ողորմածությունը, գթությունը, կարեկցանքը, հիվանդներին և բանտարկյալներին այցելությունը, նեղությունների և կարիքների մեջ գտնվողներին օգնելը, պանդուխտներին և չքավոր օտարականներին պատսպարելը, բարի կամեցողությունը, թշնամիների և օտարների համար աղոթելը և այլն:

Ճշմարիտ աստվածպաշտությունը պահանջում է, որ մենք ոչ թե բավարարվենք մեր աղոթքներով միայն, այլև թափանցենք աստվածային կամքի գիտության մեջ և ըստ այնմ կենցաղավարենք,

ինչպես ասում է «Հավատով խոստովանիմ» աղոթքի մեջ Ներսես Շնորհալին. «Բարիք կամեցող Տե՛ր կամարար, մի՛ թող ինձ իմ անձի կամքով գնալ, այլ առաջնորդի՛ր ինձ միշտ լինել ըստ Քո բարեսեր կամքի»: Իսկ Աստծու կամքն է՝ սեր առ Աստված՝ իբրև Հոր, և երկյուղ Աստծու հանդեպ՝ իբրև արդար Դատավորի և Տիրոջ՝ կյանքի ու մահվան, և երկրորդ՝ սեր ընկերոջ հանդեպ և օգնություն ընկերոջը: Ընկեր ասելով՝ պետք է հասկանանք բոլոր մարդկանց՝ սիրելի և ատելի, բարեկամ և թշնամի, քրիստոնյա և անհավատ, արդար և մեղավոր, մերձավոր հարազատ և հեռավոր օտար, մի խոսքով՝ բոլորին, որոնք Աստծու պատկերով են ստեղծված: Բոլորին պետք է սիրենք, կարեկցենք և օգնենք՝ մեր կարողության չափով, որովհետև ա՛յս է ճշմարիտ աստվածաշնորհության ապացույցը և ընկերական մարդու կոչումը:



«Վերևում՝ երկնքում, ներքևում՝ երկրի վրա, և երկրի խորքի ջրերի մեջ եղած որևէ բանի նմանությամբ քեզ կուղքեր չախտի կերտես» (Ելք Ի 4)



26

վրա իբրև տեր՝ օգտվի նրանցից: Հաճախ անվանի, քաջ և զորավոր մարդկանց մահվանից հետո նրանց արձանները պաշտում էին իբրև աստծու, որովհետև մարդը, ի բնե, ընդունակ է եղել պաշտելու և մեծարելու, սիրելու նրան և վախենալու նրանից, որը միշտ բարձր է համարվել, և կամ՝ որից նա օգուտ, բարիք և երկյուղ է ունեցել: Սա է այն կռապաշտությունը, որից զգուշանալու համար Աստված խորայեղացիներին տվեց այս պատվիրանը՝ ճանաչելով կռապաշտության հանդեպ նրանց դյուրաշարժ բնավորությունը:

Թեպետ մենք՝ քրիստոնյաներս, բարեբախտաբար, չենք ենթարկվում այսօրինակ կռապաշտության, այսինքն՝ չենք պաշտում կուռք՝ ո՛չ երկնային, ո՛չ էլ երկրային մարմիններից պատրաստված, սակայն, դժբախտաբար, ունենք այլ տիպի կռապաշտություն, որը, ըստ իս, ավելի զորավոր է, քան՝ առաջինը, այդ կռապաշտությունը մեր մեջ իրականություն է դառնում մտքով, խորհրդով, խոսքով և վերջապես՝ գործով:

Մի՞թե միայն կուռքեր ստեղծելն ու նրանց պաշտելն է կռապաշտություն, արդյո՞ք մեր ամբողջ կյանքը կռապաշտություն չէ, եթե մեր խորհուրդների և մտքերի, խոսքերի և գործերի մեջ հրաժարվում ենք որոնելուց միմիայն աստվածային կամքն ու պատվիրանների իմացությունը, ըստ այնմ՝ մեր կենցաղավարության կանոնը: Խոսքս հստակեց-

նելու համար կարևոր եմ համարում մեջբերել Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» իմաստալից աղոթքի իններորդ տունը, որը պարզորոշ կերպով ցույց է տալիս մարդու օրինավոր կյանքի սահմանն ու ձևը. «Ամենախնամ Տեր, Քո սուրբ երկյուղը պահապան դի՛ր աչքերիս՝ այլևս անպատկառ չնայելու, ականջներիս՝ չախորժելու լսել չար խոսքեր, բերանիս՝ սուտ չխոսելու, սրտիս՝ չարը չխորհելու, ձեռքերիս՝ անիրավություն չգործելու, և ոտքերիս՝ անօրենություն ճանապարհով չգնալու, այլ ուղղի՛ր սրանց ընթացքը՝ միշտ լինելու ըստ Քո պատվիրանների»:

Մենք մեր անձնական շահն ու օգուտը վեր ենք դասում Աստծու կամքից և պատվիրանից, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ կռապաշտություն:

Հպանցիկ մի անդրադարձ կատարենք մարդկանց յուրաքանչյուր դասին:

Դատավորները, իրենց դատավարական աթոռին նստած, աղքատի և հարուստի, իշխանի և ռամիկի, քաղաքացու և գյուղացու, ծանոթի և անծանոթի, բարեկամի և օտարի, մինչև անգամ թշնամու և ատելի մարդու դատն արդարապես տեսնելու, նրանց միջև խտրականություն չդնելու փոխարեն, ընդհակառակը, հարուստից կաշառվելով՝ աղքատին մերժում է, իշխանից կաշառվելով՝ ռամիկին դատապարտում է, քաղաքացուց ամաչելով՝ գյուղացուն արհամարհում է, ծանոթին

պատվելով՝ անծանոթին նեղացնում է, և ո՞րն է այս ամենի պատճառը, եթե ոչ՝ անձնական շահը, իսկ անձնական շահին զոհ տալ տկարի իրավունքը՝ ի՞նչ է, եթե ոչ՝ կռապաշտություն. «Դատ դատաստանի ժամանակ անիրավություն մի՛ արա, աղքատի հանդեպ աշառություն մի՛ արա, հարուստին մի՛ շողոքորթիր: Արդա՛ր դատիր քո ընկերոջը» (Ղևտ. ԺԹ 15):

Քահանան Աստծու և մարդկանց միջև ունեցած իր պատգամավորության մեծ գործում պետք է ցանկացած ժամի իր հովվությանը հանձնված ժողովրդի հոգևոր կարիքները հոգա, նրանց մեջ կրոնական զգացմունք առաջացնի, նրան՝ իր խոսքով, գործով և ամբողջ կյանքի օրինակով կրթի, դաստիարակի և առ Աստված մոտեցնի, նրա թերությունները, մոլություններն ու հանցանքները արմատախիլ անի, նրան ճշմարիտը քարոզի, օգտակարն ուսուցանի, մարմնական բազում հաճույքներից իրեն զրկի՝ ըստ առաքյալի խոսքի. «Ո՛չ երկդիմի խոսող, ո՛չ գինեսեր, ո՛չ շահամուկ, այլ թող պահեն հավատի խորհուրդը մաքուր խղճով» (Ա Տիմ. Գ 9): Իր միակ մխիթարությունը Սբ. Գրքի մեջ փնտրելու, այնտեղից ժողովրդին հրամցնելու, նրանով լցվելու, նրանով և նրանց մեջ խորհելու փոխարեն՝ ըստ առաքյալի խոսքի. «Հետամտի՛ր Աստծու խոսքը ընթերցել, հորդորել և ուսուցանել հավատացյալներին: Զանց մի՛ առ այն շնորհը, որ

քո մեջ է, որ տրվեց քեզ մարգարեությամբ, երեց-ների ձեռնադրումով: Այդ բանի վրա մտածի՛ր և հարատևի՛ր դրանում» (Ա Տիմ. Դ 13-15), գիտութ-յունը մերժելու համար աստվածային սպառնացող վրեժխնդիր ձայնից սարսափելու փոխարեն, որն առաջարկում է Ովսե մարգարեն. «Դու մերժեցիր իմացությունը, ես էլ քեզ կմերժեմ, որպեսզի քա-հանայություն չանես ինձ համար» (Ովսե Դ 6), իր ժողովրդին վշտակից և ցավակից լինելու, նրա վիշտը և ցավն իբրև իրենն ընդունելու փոխա-րեն, որովհետև ինքն է նրա հոգևոր բժիշկը՝ ըստ առաքյալի խոսքի. «Կա՞ տկար մեկը, որի հետ ես էլ տկարացած չլինեմ. կա՞ գայթակղված մեկը, որի համար իմ սիրտը այրված չլինի» (Բ Կորնթ. ԺԱ 29), «Որովհետև ես ինքս երդումով փափագում էի նզովվել Քրիստոսից իմ ազգակից եղբայրների համար» (Հռոմ. Թ 3), այն ծանր պատասխանատ-վությունից սոսկալու փոխարեն, որն ունի Աստծու Ահեղ դատաստանի առաջ՝ իր հովանավորությա-նը և տեսչությանը հանձնված ժողովրդի համար՝ ըստ մարգարեի խոսքի. «Մարդո՛ւ որդի, ես քեզ դետ կարգեցի Իսրայելի այդ տանը. դու ինձանից պատգամներ ես լսելու և իմ անունից սպառնա-լու ես նրանց: Երբ անօրենին ասեմ՝ ստույգ պի-տի մեռնես, դու այլևս չես զգուշացնելու նրան, ոչ էլ ասելու ես անօրենին, որ զգուշանա, հետ դառ-նա իր չար ճանապարհից ու ապրի: Այդ անօրենն

իր անօրենսության մեջ է մեռնելու, և նրա արյունը քեզանից եմ պահանջելու» (Նզեկ. Գ 17-18): Ահա՛ այսպիսի հովվությանմբ և տեսչությանմբ, սիրով և հոժարությանմբ իր բանավոր հոտը հովվելու և ինքն իր կյանքով ժողովրդի համար առաքինության, արդարության և սրբության հայելի լինելու փոխարեն, որի մեջ ժողովուրդը տեսնելով իր ոչ ճիշտ և թերի կերպարը, ուղղվի և նմանվի նրան, ինչպես առաքյալն է խրատում. «Ուրեմն՝ աղաչում եմ երեցներին, ես էլ նույնպես լինելով երեց ու վկա Քրիստոսի չարչարանքների և մասնակից գալիք փառքի հայտնության. արածեցրե՛ք Աստծու այդ հոտը, որ ձեզ է հանձնված՝ վերակացու լինելով ոչ թե հակառակ ձեր կամքին, այլ՝ հոժարակամ, ըստ Աստծու» (Ա Պետ. Ե 1-2), «Զգո՛ւյշ եղեք ինքներդ ձեր և ամբողջ հոտի համար, որի վրա Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ՝ հովվելու համար Տիրոջ ժողովրդին, որին նա փրկեց իր արյունով» (Գործք Ի 28): Այս բոլոր պարտականություններին լծվելու և դրանք կատարելու համար պետք է ուղղի, դաստիարակի, քարոզի, ուսուցանի և չպաշտպանի իր ժողովրդի թերությունները՝ անտեսելով իր անձնական շահերը, չմոռանալով, որ քահանա է և չարհամարհի իր քահանայական մեծ կոչումը՝ չանելով այն, ինչը որ ամոթ է և հանցանք՝ մինչև անգամ աշխարհիկների համար, ուր մնաց՝ իր համար, որ ժողովրդի առաջնորդն է: Այնպես պետք

է ասլրի և կենցաղավարի, խոսի և գործի, որ արհամարհելի չլինի աշխարհականի համար, քանզի միջնորդ կամ պատգամավոր է կարգված Աստծու և մարդկանց միջև: Նա հայելի է ժողովրդի համար, բայց ինչի՞ հայելի՝ մեղքերի՞ և գայթակղությա՞ն: Ժողովուրդը, նրա մեջ մեղք և գայթակղություն տեսնելով, ինքը ևս կգայթակղվի և մեղքից դուրս գալու փոխարեն՝ մեղքի անդունդի խոր հատակը կսուզվի. և այս ամենի պատճառն ի՞նչն է լինելու, եթե ոչ՝ անձնական շահը, մարմնական ցանկությունների բավարարումը և աշխարհասիրությունը, որոնք սարսափելի կռապաշտություն են քահանայի համար:

Ուսուցիչն իր ուսուցչական ամբիոնից իրեն ունկնդրող ուսանողներին փոխանակ այնպիսի պարզ և հասկանալի ձևով օգտակարը խոսելու, որ ուսանողներն առանց դժվարության ըմբռնեն դասական խոսքը, մարսեն, ուղղվեն և զարգանան, փոխանակ իբրև հայր՝ իր սաների հետ ուսուցչական գործում սիրով, հոժարությամբ և երկայնամիտ համբերությամբ վարվելու, բարձր և վսեմ հեղինակությամբ, քաղցր վարվեցողությամբ զարդարված՝ իր աշակերտների առաջ իրեն պահելու փոխարեն, ընդհակառակը՝ աղճատյալ ոճով է դասախոսում, որը չեն հասկանում ունկնդիր ուսանողները, կամ բոլորովին անօգուտն ու ավելորդն է ուսուցանում կամ պաշտոնական և սառը ձևով

է իրեն պահում իր ուսուցչական բարձր պաշտոնում կամ ակամա և անսիրտ ձևով է ընթանում իր ուսուցչական պարտականությունների մեջ՝ ամենևին հաշիվ չտալով իրեն, թե ինչքան օգտվեցին իրենից ուսում և գիտություն ակնկալող անմեղ մանուկները, միայն՝ իր ամսականը ստանա ճիշտ և ժամանակին: Սա ևս անձնական շահ է և հետևաբար՝ կռապաշտություն:

Ծնողները փոխանակ իրենց ծնողական իրավունքը սրբությամբ պահելու և ծնողական պարտականությունները հարազատությամբ կատարելու, այն է՝ իրենց զավակներին ամենից առաջ Աստծու հետ ծանոթացնելու, Նրա բարիքների մասին իրենց զավակներին պատմելու և ուսուցանելու և հետևաբար՝ առ Աստված նրանց սրտերի մեջ մի սքանչելի սեր և երախտագիտություն սերմանելու, փոխանակ նախապես եկեղեցու և ուսումնարանի դուռը ցույց տալու, Աստծո կամքը նրանց ուսուցանելու, նրանց համար աղոթելու և նրանց օրհնելու, նրանց առաքինությունների մեջ վարժեցնելու, այն է՝ աղքատին, կույրին, կաղին, հիվանդին, անտուն թափառող խեղճին, մերկերին, անհայր ու անմայր թշվառ որբերին սիրելու, կարեկցելու և օգնելու, իրենց որդիներին որպես աստվածային ավանդ ընդունելու և ըստ այնմ՝ մեծ զգուշավորությամբ հսկելու նրանց բարոյական կյանքը, ամեն տեսակ գայթակղություննե-

րից հեռու պահելու, ընդհակառակը՝ ժամանակից շուտ նրանց ծանոթացնում է աշխարհի, այսինքն՝ ապականված հատկությունների և սովորությունների հետ: Որդիների ներկայությամբ իրենք բամբասում են, անիծում են, հայհոյում են ուրիշներին և այս կենդանի դասը սովորեցնում են նրանց. պճնվում են շուալ զարդարանքներով և թանկագին հագուստներով, հաճախում են զվարճության և պարապության վայրեր, ապրում և կենցաղավարում են շուալ, արհամարհում են, զրկում և արտաքսում բոլոր աղքատներին և խեղճերին: Հեռու են մնում Եկեղեցուց, ձանձրանում են աղոթքից, որ վշտացած մարդու ամենասիրելի ընկերն ու մխիթարիչն է, զլանում և ավելորդ են համարում որդիներին պատմել ու ուսուցանել Աստծու բարիքը և մեծ գործերը, ամենևին չեն ձգտում որդիների սրտերի և հոգիների մեջ արթնացնելու երախտագիտության զգացում առ Աստված, որ բոլորիս բարի Հայրն է, կարեկցություն՝ թշվառի հանդեպ, սեր՝ ընկերոջ հանդեպ, հարգանք և պատկառանք՝ ծերերի հանդեպ, շնորհակալություն՝ բարերարների հանդեպ, ջերմեռանդություն և հավատ՝ աստվածապաշտության հանդեպ, ջերմ համակրանք՝ դեպի ազգը և հայրենական Եկեղեցին և ակնածու հնազանդություն՝ իրենց ծնողների նկատմամբ: Ամբողջովին անզգույշ և առանց հեռատես խոհեմության են վարվում, շարժվում, խոսում, գործում

իրենց որդիների ներկայությամբ և այս ընթացքով դեռ մանկությունից թունավորում են որդիների բնավորությունը: Ծնողների այս զանցառու և անզգույշ հարաբերությունն իրենց որդիների հանդեպ ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ կռապաշտություն:

Որդիներն իրենց ծնողների երախտիքն ու աշխատանքը գնահատելու, իրենց կյանքով մինչև անգամ իրենց ծնողների կյանքի բարօրությանը նվիրվելու փոխարեն, նրանց մեջ Աստծու պատկերը տեսնելու փոխարեն, նրանց պաշտելու և նրանցից պատկանելու փոխարեն, ծնողների ճակատին իրենց կամքը և պարտականությունը կարդալու, նրանց գովելի հատկանիշները ժառանգելու փոխարեն, իրենց ծնողների ծերության կամ ապաքախտության ծանր ժամանակի համար նեցուկ և գավազան լինելու փոխարեն, ընդհակառակը՝ չեն հավանում իրենց բազմերախտ ծնողների կրթությունը, կենցաղավարությունը, հատկությունները, համեստ խորհուրդները և հեռու չեն մինչև անգամ երախտավոր ծնողներին արհամարհելուց: Սա չարյաց փոքրագույնն է: Եթե չքավոր և թշվառ են ծնողները, որդիները պատրաստ են անգամ մի շնչին դեպքից դրդված՝ ամբողջովին թողնելու ծնողական հարկը՝ ուրանալով իրենց երախտավոր ծնողներին: Իսկ եթե հարուստ են ծնողները, և իրենց համար կա մեծ ժառանգություն, ապա միայն սրա համար առերես հնազանդվում են ծնո-

ղական հրամաններին՝ ոչ թե նրանց երախտիքը գնահատելով, այլ իրենց ժառանգությունը սեփականատեր դառնալու համար: Սա ի՞նչ է, եթե ոչ՝ դառը կռապաշտություն. «Վա՛յ նրան, որ իր հորը կասեր, թե՛ ինչո՞ւ ծնեցիր ինձ, և մորը, թե՛ ինչո՞ւ ծննդաբերեցիր ինձ» (Ես. ԽԵ 10), «Որդի գորավիզ եղիր քո հոր ծերությունը և մի՛ տրտմեցրու նրան իր կյանքի օրերում», «Որդեա՛կ, գորավի՛զ եղիր քո հորը ծերության ժամանակ և նրան մի՛ տրտմեցրու իր կյանքի ընթացքում» (Սիր. Գ 14):


Վաճառականները և արհեստավորները, առևտրի և արհեստի մեջ իրենց չափավոր օգուտը փնտրելու և գնողի կամ գործատիրոջ հավատը չխախտելու՝ թեև սակավ, բայց արդարությանմբ վաստակելու փոխարեն, ընդհակառակը՝ իրենց շահերի համար վատը վաճառում են իբրև լավ և թանկ: Իսկ արհեստավորները գործատիրոջ գործը պատրաստում են թույլ և խախուտ, որ շուտ հնանա և մաշվի, և իրենք դարձյալ օգտվեն: Սա ևս մի տեսակ կռապաշտություն է, որովհետև սրա հիմքը խարդախությունն է: Այս կերպ պետք է հասկանալ բոլոր տեսակի մարդկանց: Այս երկրորդ պատվիրանի մեջ մտնում են կախարդությունը, սնոտիապաշտությունը և նախապաշարմունքը, սրանք ևս մասնակի առումով կուռքեր են, որոնց մասին պարզ ասված է Սբ. Գրքում. «Ձեր մեջ թող չգտնվի այնպիսի մեկը, որն իր տղային կամ աղջ-

կան կրակի բովից անցկացնի, կախարդությամբ կամ գուշակությամբ զբաղվի, թռչուններին նայելով կանխագուշակումներ անի, մոգություններով զբաղվի, վհուկ կամ սուտ մարգարե լինի, ոգեհարցությամբ զբաղվի» (Բ Օր. ԺԸ 10-11):

Երկրորդ պատվիրանն ինչպես որ իսրայելացիներին էր զգուշացնում հեռու մնալ կուռքեր պատրաստելուց և նրանց պաշտելուց, այնպես էլ մե՛զ է զգուշացնում հեռու մնալ այս տեսակ կռապաշտությունից, որը, ըստ իս, ավելի մեծ կռապաշտություն է, որի մեջ, ցավով եմ ասում, անպայման թաթախված ենք մենք՝ մարդիկս, և որի մասին առաքյալը զգուշացնում է. «Սպանեցե՛ք, ուրեմն, ձեր երկրավոր ցանկությունները. դե՛ն գցեցեք պոռնկություն, պղծություն, հոռի կրքեր, չար ցանկություն և ագահություն, որ կռապաշտություն է» (Կողոս. Գ 5):



ԵՐՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆ



«Քո Տեր Աստծու անունը զուր տեղը
չպիտի արտասանես» (Ելք Ի 7)

Առաջին և երկրորդ պատվիրանով մենք պարտավորվեցինք պաշտել և պատվել Աստծուն, իսկ այս երրորդ պատվիրանով մենք պարտավորվում ենք պաշտել և պատվել նրա Անունը: Չի կարելի պաշտել Նրան և չպաշտել Իր Անունը, որովհետև Անունն Իր մեջ է, և Ինքը՝ Անվան մեջ: Անունը՝ Իրենով և Ինքը՝ Անվամբ: Իսկ եթե անարգենք Անունը, հետևապես ամբողջովին անարգած կլինենք նաև Իրեն:

Աստծու սուրբ Անունը մենք պաշտում ենք և պահում օրհնաբանությանմբ, սաղմոսերգությանմբ, աղոթքով և ուխտակատարությանմբ: Եվ հակառակը՝ Նրա սուրբ Անունն անարգում ենք և անպատվում հայհոյությանմբ, անիծաբանությանմբ, անիրավ և սուտ երգումներով և ուխտազանցությանմբ:

Այս պատվիրանը մեզ ուսուցանում է առաջինն անել և կատարել, իսկ երկրորդից՝ գարշել և հեռու մնալ:

Նրա Անունը պաշտելու և պատվելու համար մեր շուրթերից պետք է արտաբերենք միայն օրհնություն, սաղմոսերգություն, աղոթք, օրհնենք Նրա սուրբ Անունը և գործերը, սաղմոս ասենք և աղոթենք Նրան ամեն ժամ, իսկ եթե ուխտ ենք կնքում Նրա հետ՝ մի որևէ բարեգործության կամ պարտականության կատարման համար, պետք է ջանանք այդ ուխտը կատարել ժամանակին՝ անպատճառ և բոլոր պայմանների համաձայն:

Իսկ առ ընկերներն ունեցած մեր պարտականությունների մեջ Աստծու սուրբ Անունը պատվելու և պաշտելու համար պետք է նրանց հանդեպ մեր սրտերից դուրս գա բարի կամեցողություն, մեր հոգուց՝ կարեկցություն, մեր մտքից՝ բարի խորհուրդ, մեր շուրթերից՝ օգտակար և հավատարիմ խոսք, և մեզանից ամբողջովին՝ հարազատ եղբայրություն և բարեկամություն, որպեսզի լինենք Որդիները մեր Հոր, որ երկնքում է, ինչպես հորդորում է մեզ մեր հարազատ բարեկամը՝ Հիսուս. «Որպեսզի որդիները լինեք ձեր Հոր, որ երկնքում է» (Մատթ. Ե 45):

Եվ ճիշտ հակառակը՝ Նրա սուրբ Անունը մենք անարգում ենք և անպատվում, եթե մեր շուրթերից դուրս են գալիս հայհոյություն, անիրավ և սուրբ երգում: Պետք է մեր շուրթերը զգուշանան հայհոյելուց՝ ինչպես իրեն, այդպես էլ եկեղեցական սուրբ արարողություններն ու ծեսերը, խորհուրդ-

ներն ու պաշտամունքները: Պետք է մեր շուրթերը զգուշանան սուրբ և անիրավ երդումներից, մանավանդ՝ եթե Աստծու անունով է, որովհետև ամենամեծ անպատվությունն է Աստծու Անունով սուտ երդումը, մինչև անգամ՝ ճշմարիտ երդվելը, քանի որ Աստված մեր վկան չէ, այլ՝ մեր Արարիչը և մեր երկնավոր Հայրն է, որի անունը միայն պիտի օրհնենք և երախտապարտ զգացումով հիշատակենք, և պարտավոր ենք Նրանով մխիթարվել, այլ ոչ թե՝ վկա դարձնել:

Սակայն կա՞ արդյոք պատճառ՝ Աստծու Անունը զգուշությամբ արտաբերելու և սուրբ պահելու, ինչպես Տերունական աղոթքի առաջին խնդրվածքի մեջ. «Սուրբ թող լինի քո անունը», խիստ հարգելի և անուրանալի պատճառ կա, քանի որ հավատում ենք և պետք է հավատանք, որ Աստված է ողջ տիեզերքի և արարածների Արարիչը, տիեզերքը և արարածները Նրա ձեռքի գործերն են, պետք է նաև ընդունենք, որ Նրա Անունն է տիեզերքի և արարածների վրա, որովհետև Նրանն են բոլորը. «Երկինքը պատմում է Աստծու փառքը, և երկնքի հաստատությունը հայտնում է նրա ձեռքի գործերը» (Սաղմ. ԺԸ 1), «Տիրոջ ողորմությամբ է լցված երկիրը: Տիրոջ խոսքով ստեղծվեց երկինքը, և իր բերանի շնչով՝ նրա բոլոր գործությունները» (Սաղմ. ԼԲ 5-6), «Քոնն է ցերեկը, և քոնն է գիշերը, լույսն ու արևը դո՛ւ հաստատեցիր: Դո՛ւ հաս-

տատեցիր երկրի բոլոր սահմանները, գարունն ու ամառը դո՛ւ ստեղծեցիր» (Սաղմ. ՀԳ 16-17): Տիեզերքը և բոլոր արարածներն Աստծու գործերն են, և Աստված է Տերը գործերի, ուրեմն Տիրոջ անունը պիտի լինի գործի վրա, լավ գործը փառավորում է Տիրոջ անունը: Մենք՝ արարածներս, լավը լինելով, սրբությամբ կենցաղավարելով և մեր՝ առ Տեր Աստված ունեցած պարտքը տալով, իհարկե պաշտած կլինենք մեր Արարչի սուրբ Անունը, հետևաբար և՛ սուրբ կլինի Նրա Անունը մեզ վրա:

Երկրորդ՝ Հիսուսով մենք որդեգրվեցինք Աստծուն. Նա եղավ մեր Հայրը, և մենք՝ Նրա որդիները: Եվ ինչպես որ հոր անունը որդու վրա է, նույնպես և Աստծո Սուրբ Անունը մեզ վրա է, և ինչպես որդին երախտիք ունի Հոր առաջ, պարտավոր է պատվել և մեծարել իր հոր անունը բարի վարքով, խոհեմ և իմաստուն կենցաղավարությամբ, նույնպես և մենք՝ իբրև մեր Երկնավոր Հոր որդիներ, պարտավոր ենք պաշտել Նրա սուրբ Անունը՝ Աստծու և ընկերների հանդեպ ունեցած մեր բոլոր պարտականություններով, հարգանքով և անկեղծությամբ հիշել Նրա սուրբ Անունը, այլ ոչ թե՛ մեր երդումների առարկա դարձնել:

Սակայն Սբ. Գիրքը թույլատրում է Աստծու Անունով երգվել միայն արժանավոր գործի և ճշմարտության համար՝ համոզվելով, որ Աստծու Անունով արժանավոր գործի համար ճշմարիտ եր-

դումը՝ ապացույց և նշան է առ Աստված մեր հավատքի և Նրա բոլոր կատարելությունների խոստովանության՝ ընդունելով, որ Նա ճանաչում է մեր սիրտը, քննում է մեր միտքը, գիտի մեր խորհուրդները, ուրեմն և կարող է պատժել մեզ մեր սուտ երդումների համար. «Երկնչի՛ր քո Տեր Աստծուց, պաշտի՛ր նրան, հարի՛ր նրան և երգվի՛ր նրա անունով» (Բ 0ր. Ժ 20):

Երգման կարևորությունը ընդունում է նաև առաքյալը՝ ճշմարտությունը գորացնելու և վեճերը արդարությանը վճռելու համար. «Արդարեւ, մարդիկ երգվում են նրանով, ով մեծ է իրենցից. և նրանց մեջ եղած ամեն հակառակության վերջնական վճիռը երգումն է» (Եբր. 2 16):

Իսկ եթե Աստծու Անունով երգվողը սուտ է երգվում և կամ երգմնազանց է լինում, այս դեպքերում նա ամենամեծ չարիքն է գործում, և կանխորոշված է նրա համար Աստծու սպառնալիքը՝ մարգարեի բերանով. «Ես պիտի հանեմ դա,- ասում է Ամենակալ Տերը,-և այն պիտի մտնի գողերի տունը և նրանց տունը, որոնք սուտ երգում են անում իմ անունով. պիտի մնա նրանց տանը և պիտի սպառի այն, նրա փայտն ու քարերը» (Զաք. Ե 4):

Երգման մի տեսակ կա, որը ևս ուխտադրություն է, որով մարդն իր որևէ հոգևոր կամ մարմնավոր գործի հաջող կատարման համար հատուցման ուխտ է կնքում իր և Աստծու միջև: Այսպիսի

հատուցողական երդմնադիրը կամ ուխտադիրը պարտավոր է անվրեպ ճշտություն և հարազատություն պահպանել իր երդմնական ուխտադրության հանդեպ, ինչպես պատվիրում է Սբ. Գիրքը. «Եթե ուխտ ես անում քո Տեր Աստծուն, ապա մի՛ հապադիր այն կատարել, որովհետև քո Տեր Աստվածը պահանջելով պահանջելու է քեզանից, և չկատարելու դեպքում մեղք կբարդես վրադ: Եթե չես ցանկանում ուխտել, ապա դա մեղք չի համարվի քեզ» (Բ Օր. ԻԳ 21-22):

Սակայն, Հիսուս այս պատվիրանի թերությունը լրացրեց՝ ասելով. «Լսել եք դարձյալ, թե ինչ ասվեց նախնիներին. «Երդմնազանց մի՛ լինիր, այլ արա՛ Տիրոջն այն, ինչ երդվել ես»: Իսկ ես ձեզ ասում եմ՝ ամենևին չերդվես. ո՛չ երկնքի վրա, որովհետև Աստծու աթոռն է, ո՛չ երկրի վրա, որովհետև նրա ոտքերին պատվանդան է, և ո՛չ Երուսաղեմի վրա, որովհետև մեծ Արքայի քաղաքն է: Եվ քո գլխով էլ չերդվես, որովհետև չես կարող մի մազ իսկ սպիտակ կամ սև դարձնել: Այլ ձեր խոսքը լինի՝ այո՞ն՝ այո, և ոչը՝ ոչ. որովհետև դրանից ավելին չարից է» (Մատթ. Ե 33-38): Եվ սա ինչո՞ւ է այսպես. որովհետև մեր կյանքի ճշմարիտ դաստիարակն է Հիսուս, կամենում է ամեն բանի մեջ կատարյալ դարձնել մարդկանց, այնպես, ինչպես Աստված է կատարյալ՝ ասելով. «Արդ, կատարյալ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»

(Մատթ. Ե 48): Իսկ կատարյալ լինելու պայմանն այն է, որ մարդիկ իրենց ճիշտ պահեն իրենց գործերում, այնպես, որ բոլորը նրանց հասարակ «այո» կամ «ոչ» խոսքին ստիպված լինեն հավատալ, և հարկ չլինի երգվելու Աստծո Անունով, որի Սուրբ Անունը մեր երջանկության մեջ պիտի լինի Նրա հանդեպ ունեցած մեր երախտագետ զգացումների հայտագիրը, վտանգի, նեղության և վշտերի մեջ՝ մեր հույսը, մխիթարությունը և համբերությունը, ընկերական կենցաղավարության շրջանում՝ սերը և հավատը և այլն:

Քանի որ երդմնական բնավորությունը մարդը նախապես՝ մանկության հասակում է ստանում կամ ձեռք բերում և ապա կյանքի ընթացքում՝ զարգացնում, և քանի որ մեծ պարտականություն ունեն ծնողներն իրենց որդիների սկզբնական դաստիարակության հարցում, դեռևս մանկությունից սկսած՝ պետք է այնպիսի սեր, հարգանք և մեծարանք արթնացնեն զավակների սրտի մեջ առ ամենաբարի Հայրն Աստված, որ զավակները մանկուց սովորեն ոչ միայն սոսկալ Աստծու Անունով երգվելուց, այլ Նրա սուրբ Անունը հիշելն անգամ պարտականություն համարեն՝ անելու մեծ հարգանքով, անկեղծությամբ և անհուն երախտագիտության զգացումով: Ուրեմն՝ դաստարաններում և կամ այլ հանգամանքներում երգվեցնելը մեղք է համարվում, քանի որ դեմ է Հիսուսի պատվիրա-


նին և Նրա նպատակին, որ է մարդկային բնության կատարելությունը: Հիրավի, եթե մարդիկ ձգտեին կատարյալ լինել, ապա երգումն ինքնըստինքյան կմերժվեր: Բայց հակառակ պատկերն ենք տեսնում մարդկային կյանքում. մարդիկ բազմացնելով իրենց սուտը՝ ստիպված են երգումներով այն ճշմարտության փոխելու. սա է հավատի խախտման արդյունքը: Արդյո՞ք բավարար և ճիշտ չէր լինի, որ մարդիկ իրենց ճշմարիտ գործով և վարքով այնպես գրավեին մարդկանց հավատը, որ իրենց մի հասարակ «այո»-ն կամ «ոչ»-ը բավարար լինեին հաստատելու իրենց խոսքն ու գործը: Եթե Հիսուսի խոսքը կամ պատվերը ճշգրտությամբ կատարվեր, այդ դեպքում հավատը ժողովրդի մեջ հաստատուն կլիներ, և ուրեմն միմյանց անպայման կհավատային: Այն ժամանակ այլևս կարիք չէր լինի դիմելու ո՛չ դատարանների երգումներին, ո՛չ պարտամուրհակներին և ո՛չ էլ՝ գրավներին: Բացակա է հավատքը, և հետևաբար մարդիկ միմյանց հավաստիացնելու համար դիտավորյալ դիմում են վերոհիշյալ միջոցներին:

Հետզհետե ամբողջովին ոչնչացնելով հավատքը՝ մարդիկ այլևս չեն հավատա միմյանց երգումներին, պարտատոմսերին և գրավներին: Այս տխուր ճշմարտությունը արդեն սկսել է բողբոջներ արձակել մարդկանց հարաբերություններում. եթե սա սկիզբն է, ուրեմն պետք է վախճանին

սպասել: Ուրեմն պետք է ընդհատվեն մարդկանց՝ միմյանց հետ ունեցած հարաբերությունները, առն ու տուրը, բոլոր տեսակի գործերը և հանձնառությունները, և ինչի՞ համար, որովհետև մարդը բնավ չի խորհում աշակերտելու իր ճշմարիտ դաստիարակին՝ Հիսուսին՝ լինելու կատարյալ: Իսկ այս վիճակն ո՞ւր պետք է հասցնի վերջում, եթե ոչ՝ այնտեղ, ուր մարդիկ, տկարացնելով ընկերային հարաբերությունները, մարդկային կյանքի գործունեությունը, եռանդը և ավյունը, կշղթայեն և կյանքն իրենց ձեռքով կմեռցնեն, այնքան ժամանակ, մինչև դարձյալ կզգան Կյանքի ճշմարիտ մեծ Հեղինակին կամ Դաստիարակին՝ Հիսուսին, հետևելու և աշակերտելու անհրաժեշտությունը՝ կատարելով Նրա պատվերը, որ են ճշմարտությունը և հավատն ամեն բանի հանդեպ և ամեն ինչում, որը մարդկանց կատարյալ դարձնելու լավագույն միջոցն է և որը միայն կարող է քանդել այն շղթաները, որոնք կաշկանդում են մարդկային կյանքը՝ նրանց արթնացնելով մեռելային վիճակից:



ՀՈՐՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆ



«Հիշիր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես և պիտի կատարես քո բոլոր գործերը: Յոթերորդ օրը քո տեր Աստծու շաբաթ օրն է: Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես» (Ելք Ի 8-10)

Քանի որ Աստված Իր ստեղծագործությունն ապարտեց վեցերորդ օրը և հանգստացավ յոթերորդ օրը, այսինքն՝ շաբաթ օրը, ուստի և պատվիրեց, որ մարդիկ ևս վեց օր իրենց մարմնական պետքերի համար հոգան և աշխատեն, իսկ յոթերորդ օրը, որը Տիրոջ շաբաթն է, հանգստանան իրենց ֆիզիկական աշխատանքներից և այդ օրը հոգևոր գործերով նվիրվեն Աստծուն:

Հրեաները շատ ճիշտ էին կատարում այս պատվիրանը, մինչև անգամ՝ չափազանցորեն, որովհետև արգելված էր նրանց այդ օրը ցանկացած ֆիզիկական գործ, ինչպես, օրինակ՝ կերակուր պատրաստելը, դրամական առևտուրը, կրակ վառելը, անտառից փայտ հավաքելը. այս օրենքի զանցառուները քարկոծվում էին: Այս չափազանցությունն էր, որ Հիսուս նկատեց հրեաների մեջ և

տեսավ, որ օրենքի բովանդակությունը նրանք ամբողջովին փոխել էին՝ տալով նրան միայն արտաքին շղարշ: Երբ մի անգամ հրավիրված էր մի փարիսեցու մոտ՝ ճաշի, այնտեղ տեսավ ջրգողություն ցավով տառապող մի մարդու, որին խղճաց, կարեկցեց և բժշկեց՝ պահպանելով օրվա իսկական սուրբ նշանակությունը, որովհետև այդ օրը բարեգործության օր էր, և Հիսուս բարեգործություն արեց, սակայն շատ ավելի ձևապաշտ, քան օրինապաշտ հրեաները չարախոսեցին՝ ինչո՞ւ շաբաթ օրը բժշկեց, ինչպես վկայում է Ղուկաս Ավետարանիչը. «Երբ մի շաբաթ օր նա մտավ փարիսեցիների իշխանավորներից մեկի տունը՝ հաց ուտելու, նրանք դիտում էին նրան: Եվ ահա այնտեղ, նրա առաջ ջրգողով հիվանդ մի մարդ կար: Հիսուս պատասխանեց օրենսգետներին և փարիսեցիներին և ասաց. «Շաբաթ օրով բժշկելը օրինավո՞ր է, թե՞ ոչ»: Նրանք լուռ մնացին: Հիսուս նրան բռնելով՝ բուժեց և արձակեց: Եվ նրան ասաց. «Ձեզանից ո՞ւմ եզր կամ էշը ընկնի ջրհորի մեջ, նա իսկույն այն չի հանի շաբաթ օրով»: Եվ այդ մասին նրան պատասխան տալ չկարողացան» (Ղուկ. ԺԴ 1-7):

Այս պատվիրանով հրեաները հիշում էին Աստծու մեծ բարիքը, այն է՝ աշխարհի արարչագործությունը և հետևապես՝ Աստվածային Նախախնամությունը, որովհետև, եթե Աստված ստեղծեց աշխարհը, հետևաբար պետք է խնամի Իր ստեղ-

ծած աշխարհը, ինչպես հաստատում է ավետարանական ճշմարտությունը. «Ձեր կյանքի համար հոգ մի՛ արեք, թե ի՛նչ պիտի ուտեք կամ ի՛նչ պիտի խմեք, և ոչ էլ՝ ձեր մարմնի համար, թե ի՛նչ պիտի հագնեք. չէ՞ որ կյանքը ավելին է, քան կերակուրը, և մարմինը՝ քան զգեստը: Նայեցե՛ք երկնքի թռչուններին. ո՛չ վարում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ շտեմարանների մեջ հավաքում. և ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց. չէ՞ որ դուք ավելին եք, քան նրանք» (Մատթ. 2 25-27), «Ձեզանից ո՞վ է այն մարդը, որից իր որդին եթե հաց ուզի, միթե քա՞ր կտա նրան. և կամ՝ եթե ձուկ ուզի, միթե օ՞ձ կտա նրան: Արդ, եթե դուք, որ շար եք, գիտեք ձեր որդիներին բարի պարգևներ տալ, որքա՛ն ևս առավել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, որ նրանցից ուզում են» (Մատթ. է 9-12): Ինչպես և ծնողները, որ աշխարհ են բերում զավակներին, պետք է սնեն, խնամեն և դաստիարակեն նրանց, այսպես և տանտերը, ոչ միայն պատրաստում է իր տունը, այլև ամեն տարի հոգում է և մտածում իր տան վերանորոգության, հաստատության, պայծառության և գեղեցկության մասին:

Եվ այսպես, հրեաները, շաբաթ օրը հիշելով Աստծու մեծ բարիքը, այն է՝ Արարչագործությունն ու Նախախնամությունը, պարտավորվում էին իրենք ևս բարիք գործել և օգտակար լինել

ընկերներին: Հիշելով իրենց Նահվեյի հանգիստը¹ իրենք նույնպես պարտավորվում էին հանգստանալ մարմնական գործերից կամ աշխատանքներից՝ այդ օրը նվիրելով Արարչին: Շաբաթ օրը սուրբ պահելը կամ Աստծուն նվիրվելն ընկալվում է այնպես, որ մարդիկ, վեց օր անդադար աշխատելով, հոգալով իրենց մարմնավոր պետքերը, յոթերորդ օրը պետք է նվիրվեին Արարչին, այն է՝ պետք է խմբովին ուղղվեին դեպի Աստծու տաճարը, սակայն՝ ինչպե՞ս. ո՛չ թե իրենց մեղքերով և հանցանքներով, առանց զղջման, որովհետև այդպիսիների՝ Եկեղեցի գնալը մերժում է Աստված՝ Երեմիա մարգարեի բերանով. «Եվ գողանաք, սպանեք, շնություն անեք, սուտ երդում տաք... Ու դուք կգաք, կկանգնեք իմ առաջ, այս Տան մեջ... Մի՞թե ձեր աչքին ավազակների քարայր է դարձել իմ այս Տունը, որի վրա իմ անունն է դրված: Ահավասիկ ես տեսա,-ասում է Տերը» (Երեմ. է 9-11), այլ պետք է շաբաթվա մեջ գործած իր մեղքերն ու հանցանքները զղջա, ապաշխարի և այդպես գնա իր Արարչի Տուն. «Քանզի՛ր անիրավության հանգույցը, խորտակի՛ր քո վաճառականական խարդախությունն ու բռնությունը, ների՛ր և արձակի՛ր նեղյալներին և պատռի՛ր բոլոր անիրավ մուրհանգները» (Ես. ԾԸ 6): Ուրեմն, մարդիկ պետք է իրենց

¹ Այսինքն՝ Աստծու հանգիստը:

վրա դրված այս աստվածադիր պարտքը կատարեն և ապա համարձակ ճակատով կանգնեն Աստծու առաջ՝ փառք տալով վեցօրյա աշխատանքի համար և խնդրելով Նրա շնորհը՝ գալիք շաբաթը ևս արդար գործերով անցկացնելու: Մարդիկ այդ օրը պետք է ողորմություն տան աղքատներին, օգնեն խեղճերին և բարեգործություն անեն առհասարակ՝ ի նշան առ Աստված ունեցած սիրո և երախտագիտության, որովհետև օրն Աստծունն է, և խեղճերն ու աղքատները ևս Աստծունն են, և այդ օրը նրանք ուրախանում են բարեպաշտների ողորմության տուրքերով. «Աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն, և ըստ նրա տվածի էլ Աստված պիտի հատուցի նրան» (Առակ. ԺԹ 1), «Քաղցածներին՝ բաժանիր քո հացը և անօթևան աղքատներին՝ տար քո տունը. եթե մերկ մարդ տեսնես՝ հագցրո՛ւ նրան, բայց քո ընտանիքի զավակին մի՛ անտեսիր» (Ես. ԾԼ 7):

Այդ օրը մարդիկ պետք է հիշեն իրենց բոլոր պարտականությունները և շտապեն ամբողջությամբ կատարել: Պարտապանը պետք է հատուցի իր պարտատիրոջ պարտքը, եթե վերջինս այլևս հնար չունի սպասելու: Պարտատերը ևս, իր հերթին, չպետք է ստիպի պարտապանին՝ հատուցել պարտքերը, եթե պարտապանը նեղ դրույթյան մեջ է, իսկ իր վիճակը տակավին ապահով է և կարիքի մեջ չէ: Գործատերը նույն օրը պետք է հատուցի

իր մշակների և այլ արհեստավորների կատարած աշխատանքի օրավարձը, եթե իր վրա է, և չպետք է ասի՝ այսօր կամ վաղը՝ նրանց օրական հացից զրկելով և նրանց խաղաղ կյանքը հուսահատութ-
յան և գայթակղության հասցնելով. «Չասես թե՝ «Գնա՛, կգաս՝ վաղը կտամ», մինչդեռ կարող ես բարոյություն անել, քանի որ չգիտես, թե վաղն ինչ է բերելու քեզ» (Առակ. Գ 28): Հարուստը պետք է իր քսակն այդ օրը բացի՝ խեղճ, թշվառ և ողբացյալ ընտանիքների կամ գերդաստանների համար, ուր կերակրող չկա, և որբերն իրենց այրիացած մոր շուրջը պատառոտված հագուստներով նստած, անմայր թռչունի ձագերի պես, սպասում են, թե ե՞րբ աստվածային ողորմությունը կհասնի իրենց, թե երբ մի բարի մարդ կկերակրի իրենց այդ ու-
րախություն և սրբության օրը: Քահանաներն այդ օրը պետք է սեղան պատրաստեն, Պատարագ մա-
տուցեն, աղոթեն, քարոզեն և մխիթարեն իրենց հովվությանը հանձնված ժողովրդին, իսկ ժողո-
վուրդը պետք է քահանայի՝ այդ օրվա ապրուստը հոգա. «Շաբաթվա յուրաքանչյուր առաջին օրը, ձեզանից յուրաքանչյուր ոք իր համար թող հավա-
քի, ինչքան որ հաջողվի իրեն» (Ա Կորնթ. ԺԶ 2): Ծնողներն այդ օրն իրենց զավակներին պետք է առաջնորդեն Եկեղեցի, պետք է պատմեն զավակ-
ներին օրվա նշանակության մասին, պետք է աղո-
թեն նրանց համար և օրհնեն նրանց:

Այդ օրվա խոսքերը, գործերը, մտածմունքները և խորհուրդները պետք է լինեն սուրբ, օգտակար ու բարի, որովհետև սուրբ է օրը և պատկանում է Սրբերի Սուրբին, Ամենաբարի Հորը և Արարչին: Չպետք է լինի մարմնավոր աշխատանք՝ քսակի և անձնական տեսակ-տեսակ շահերի համար, որովհետև Աստծու արդարությունը շանթահարում է այդպիսիներին, և վնասը գերազանցում է նույն օրվա մեջ ձեռք բերված օգուտին:

Մենք՝ քրիստոնյաներս, շաբաթ օրվա փոխարեն կիրակի օրն ենք հանգստանում մեր մարմնական աշխատանքներից: Կիրակին է միաշաբաթը, այսինքն՝ շաբաթվա առաջին օրը, և սա է Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության հիշատակության օրը, որովհետև այդ օրը հարություն առավ և մեզ հավիտենական կյանք պարգևեց:

Յուրաքանչյուր միաշաբաթ կամ կիրակի առաքյալները և հավատացյալները Հիսուսի փրկչական մեծ գործի հիշատակն անխախտ պահելու համար, միասին հավաքվում էին և լսում Աստծու խոսքը, և իրենց խորհրդածության միակ առարկան Աստծու՝ մարդկության նկատմամբ գործած մեծ բարիքն էր, ապա միաբանությամբ և միաբարբառ՝ առ Աստված էին ուղղում երախտագիտության զգացումներ և աղոթքներ՝ միևնույն ժամանակ խնդրելով Նրա սերը, խնամքը, պաշտպանությունը և օրհնությունը, Նրա կամքի իմացությունը և

պատվիրանների պահպանության կարողությունը, որով հաստատուն կլինեն մարդկանց ժամանակավոր կյանքի երջանկությունն ու խաղաղությունը և անխուսափելի՝ երկնային հավիտենական կյանքի ժառանգության հույսը: Այդ օրը Պողոս առաքյալը պատվիրում է նաև իրենց ապրուստի հոգսը հոգալ. «Շաբաթվա յուրաքանչյուր առաջին օրը, ձեզանից յուրաքանչյուր ոք իր համար թող հավաքի, ինչքան որ հաշողվի իրեն» (Ա Կորնթ. ԺԶ 2): Աստծու օրը նվիրական է, և Եկեղեցու պատռնյաները ևս Աստծու նվիրյալներն են և աստվածային խոսքի թարգմանիչները, ուստի այդ օրը նրանց մարմնական պետքերը պետք է հոգան հավատացյալները:

Այդ օրը յուրաքանչյուր ընտանիք պետք է ներկա գտնվի Սբ. Պատարագին, իսկ ներկա չլինելը մեղք է համարվում, եթե հարգելի չեն բացակայության պատճառները: Հարգելի պատճառներ են մարմնական հիվանդությունները, բայց ո՛չ՝ հոգևոր, որովհետև հոգևոր հիվանդությունը պետք է դարմանվի հենց այդ օրը, հիվանդի պահպանությունը և խնամքը, երեխաների հսկողությունը, եթե չկա ուրիշ հսկող, ճանապարհորդությունը, եթե ճանապարհին են այդ օրը: Այդպիսիները չեն մեղանշում, եթե չեն ներկայանում կիրակի օրվա Սբ. Պատարագին. սրանցից դուրս՝ ոչ մի պատճառ հարգելի չէ, և Սբ. Պատարագին ներկա չգտնվո-

ղը մեղանշում է: Սակայն Սբ. Պատարագին ներկա գտնվել ցանկացողը պարտավոր է նախապես խորհրդածել իր թշնամական հարաբերության մասին, եթե ունի ընկերոջ հետ, և շտապի այն սիրով և հաշտությանմբ լուծելու, որպեսզի ընդունելի լինի նրա ներկայությունը Սբ. Պատարագին՝ ըստ Ավետարանի ճշմարտության. «Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելու լինես և այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի, քո ընծան թող սեղանի առաջ և գնա՝ նախ հաշտվի՛ր քո եղբոր հետ և ապա ե՛կ քո ընծան մատուցի՛ր» (Մատթ. Ե 23-24):

Կիրակի օրը ամեն մարդ պետք է արդար հաշիվ տա Աստծուն շաբաթվա մեջ գործած իր չարիքների և բարիքների համար: Պետք է խոստանա չարիքը թողնել, պատճառած վնասները հատուցել, և զգուշանա, որ առաջիկա շաբաթը ևս այսպես չսկսի: Իսկ բարիք գործելը դարձյալ շարունակի, որովհետև եթե մարդն իր օրական ել ու մուտն ամենայն հոգարությամբ նայում է, քննում, հաշվում ու ստուգում, մեծ բան է, արդյոք, եթե շաբաթը մեկ անգամ քննի իր ամբողջ շաբաթվա կյանքը և թվի իր գործած չարիքները, վնասները, օգուտներն ու բարիքները:


Կիրակի օրը Սբ. Պատարագից հետո ընտանիքի անդամները պետք է հավաքվեն և հիշեն Աստծու՝ մարդկության հանդեպ գործած բարիքները, դրա

մասին խորհրդածեն, դրանով զբաղվեն, զավակներին պատմեն օրվա պատմությունը և խորհուրդը՝ նրանց իսկ դաստիարակության համար:

Այդ օրը զեխ զվարճանքներից և, առհասարակ, մարմնական հեշտասիրությունից և բավականությունից պետք է հեռու մնալ, որովհետև բոլորը պետք է տարվեն Հիսուս Քրիստոսի Հարության ուրախությամբ, որովհետև Նրա հարությունն է մեր փրկության և անմահության հզոր գրավականը:



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆ



«Պատվիր քո հորն ու քո մորը, որ-
պեսզի բարիք գտնես և երկար ապ-
րես երկրի վրա» (Ելք Ի 12):

Լինգերորդ պատվիրանն իր մեջ բովանդա-
կում է սեր, հարգանք, հնազանդություն և
երախտագիտություն կամ, այլ կերպ ասած, բարո-
յական հատուցում:

Սերը, որն առ Աստված ունենալուց հետո որդի-
ները պետք է տաժեն ծնողների նկատմամբ, պի-
տի լինի հարազատ, հաստատուն և հարգանքով
լեցուն:

Հարազատ, այսինքն՝ առանց ժառանգության
ակնկալիքի կամ որևէ նյութական նպատակների:
Հաստատուն, որպեսզի ոչ մի ուժգին փորձություն
չկարողանա խարխլել և խզել այդ սուրբ կապը,
որով զավակները շաղկապված են ծնողներին,
իսկ ծնողները՝ զավակներին: Հարգանքով լեցուն,
այսինքն՝ ծնողների թշվառությունը որդիներին
ամենևին առիթ չպիտի տա անարգելու իրենց
ծնողներին, որոնց, իհարկե Աստծուց հետո, պար-
տական են սեփական կյանքով:

Հարգանքը, որը զավակները պետք է ունենան իրենց ծնողների հանդեպ, պիտի լինի անկեղծ և հաստատուն, առանց ինչ-ինչ հետին նպատակների, ո՛չ թե՝ առերես, այլ գնահատելով ծնողական անփոխարինելի խնամքը, ջանքը, սերն ու աշխատանքը, որ ծնողները գործադրել են իրենց համար, ուստի ծնողական երախտիքները փոխհատուցելը պետք է լինի զավակների առաջին և նախադաս պարտականությունը:

Հնազանդությունը սիրո և հարգանքի արդյունք է, նույնպես և հարգանքը սիրո պտուղ է: Որդիներն անպայմանորեն պետք է հնազանդվեն իրենց ծնողներին. բնական օրենքն է այդ պարտքը դրել որդիների վրա, որի մասին նաև առաքյալն է պատվիրում. «Որդիներ, հնազանդ եղեք ձեր ծնողներին, որովհետև դա է ճիշտը» (Եփես. 2 1):

Անհնազանդ և անառակ որդիներն իրենց կյանքով պատկերում են մի անկերպարան հրեշի, որից խուսափում է յուրաքանչյուր ազնիվ, իր պարտականություններն ու իրավունքները ճանաչող անհատ:

Երախտագիտությունը կամ բարոյական հատուցումը ամենաազնիվ հատուցումն է, որը կարող է փոխադարձվել երախտառուի կողմից երախտավորի հանդեպ: Ծնողներն Աստծուց հետո առաջին երախտավորներն են որդիների համար: Երախտագետ զավակներն իրենց ամեն տեսակի շահն ու օգուտը հոժարությամբ պետք է զոհաբերեն

ծնողների վիրավոր, ոտնահարված և թշվառ կացությունը, կարգավիճակն ու անունը վերականգնելու համար և իրենք իսկ պետք է մխիթարվեն ու բերկրանք ապրեն իրենց այդ հատուցմամբ, նրանց սիրտն ու հոգին պիտի զվարճանան՝ տեսնելով ծնողների ապահով վիճակը, խաղաղ դրությունը և մխիթարված կյանքը, ինչպես խրատում է Սողոմոն Իմաստունը. «Որդյա՛կ, գորավի՛գ եղիր քո հորը ծերության ժամանակ և նրան մի՛ տրտմեցրու իր կյանքի ընթացքում» (Սիրաք Գ 14):

Ուրեմն այս պատվիրանով Աստված սիրո, հարգանքի, հնազանդության և երախտագիտության պարտք է դնում զավակների վրա: Որդիներն իրենց ծնողների մեջ պետք է Աստծո պատկերը տեսնեն, պետք է սիրեն ծնողներին ու գնահատեն նրանց աշխատանքը, որպեսզի արժանանան ծնողական պատվին հասնելուն:

Ծնողների թափած ջանքերը մեկ առ մեկ թվելն այստեղ ավելորդ է, քանի որ այդ ջանքերը զավակներին հայտնի են: Ուրեմն մնում է խոստովանել այդ աշխատանքը և գնահատել ո՛չ միայն լուրջ խոսքերով, այլև՝ զանազան գործերով: Իսկ այդ գործը սերն է, հարգանքը, հնազանդությունն ու երախտագիտությունը, որոնց մասին հպանցիկ խոսեցինք:

Զավակները պիտի ջանան արդարությամբ օրըստօրե հաջողություններ գրանցել ու երբեւէ չձանձրանալ օրինավոր գործեր կատարելուց:

Միայն թե այդ ձեռք բերված հաջողություններից պետք է բաժին հանեն նաև ծնողներին, այն է՝ խնամք և հոգատարություն ցուցաբերեն իրենց ծերացած կամ աղքատ ծնողների հանդեպ:

Զավակները մշտապես իրենց մտքում պետք է ունենան ծնողների ջանքերը, քննեն, գնահատեն և ապա ուխտեն փոխհատուցել նույն ջանքերը, նեցուկ ու գավազան լինել նրանց համար՝ թե՛ ծերության, թե՛ անհաջողության ժամանակ: Իրենց օգտակար և խելացի կյանքով պիտի ջանան մխիթարել նրանց սիրտը բոլոր պարագաներում: Ծնողական ճակատը պիտի լինի զավակների կյանքի առաջնորդը, և այդ ճակատի վրա խելացի որդին պիտի կարդա իր պարտականությունը:

Ոչ մի կարևոր պատճառ որդիների համար առիթ չպիտի դառնա, որ նրանք թողնեն իրենց ծնողներին և մշտապես հեռանան նրանցից: Որդին միշտ պիտի որդի մնա, և ծնողը միշտ պիտի մնա որպես ծնող: Եվ երբ որդիների ու ծնողների միջև այս ճամարիտ ու կատարյալ հարաբերությունն է տիրում, այն ժամ որդիների կյանքը բարության մեջ է պսակվում և խաղաղության մեջ է ընթանում, որովհետև նրանք պատվել են իրենց ծնողներին և ճշտությամբ կատարել են իրենց որդիական պարտքը:

Հակառակ դեպքում՝ զավակները բազում վնասներ կկրեն ու պատասխանատվության կենթարկվեն ծնողների մեղքերի համար: Որդիներն այնքան

խելացի ու իմաստուն պետք է լինեն, որ ծնողների մեղքերն ու հանցանքները և նրանց՝ ուրիշների կողմից պատճառված վնասներն ու չարիքը փորձեն քավել իրենց բազմատեսակ բարեգործությամբ: Որդիները պիտի ջանան ուղղել իրենց ծնողների թերությունները, եթե կարողունակ են՝ մարել նրանց հոգևոր ու մարմնավոր պարտքերը, վերականգնել նրանց անարգված անունը և ոտնահարված պատիվը՝ թե՛ Աստծո և թե՛ մարդկանց առաջ:

Զավակները լիովին պիտի կատարեն ի բնե իրենց ուսերին դրված այս պարտականությունը՝ համոզված լինելով, որ ինչպես ծնողների մեղքի, այդպես էլ բարության արդյունքը գնում-հասնում է նրանց սերունդների սերունդներին, ինչպես վկայում է Սուրբ Գիրքը. «Ես հայրերի գործած մեղքերի համար հատուցում եմ պահանջում նրանց որդիներից, ինձ ատողների երրորդ ու չորրորդ սերունդներից: Դրա փոխարեն ես ողորմածություն եմ ցուցաբերում ինձ սիրողների ու իմ հրամանները կատարողների հազար սերունդների նկատմամբ» (Բ Օր. Ե 9-10):

Ուրեմն՝ ինչպես որ որդիները պիտի խորհրդածեն իրենց ծնողների և նախահայրերի մեղքերի մասին ու ջանան դրանք քավել իրենց բարեգործությամբ, նույնպես և ապագա ծնողները պարտավոր են կանխատեսել իրենց ապագա սերնդի կյանքը և զգուշանալ մեղանշելուց՝ համոզված լի-

նելով, որ իրենց մեղքն անցնելու է ապագա սերնդին, և Աստված դառը հատուցում է պահանջելու իրենցից, և դրա սկզբնապատճառն իրենք՝ ծնողներն են: Դա, ըստ իս, շատ արդար է, քանի որ եթե կյանքի բոլոր պարագաներում կա մի միավորող կապ, եթե արյամբ միավորվում են մարմնեղեն սերունդներն ու շառավիղները, ուրեմն ինչո՞ւ չեն թաղրել, որ կապ կա նաև բարոյական կյանքում:

Եթե ծնողական պատկերը, կերպարանքը, բնությունը կարելի է ասել, մեծավ մասամբ, փոխանցվում է զավակներին, ուրեմն պետք է ենթադրել, որ նաև ծնողների հոգևոր նմանությունը՝ թե՛ բարին ու թե՛ չարը, թե՛ արդարությունը և թե՛ մեղքը նույնպես փոխանցվում են որդիներին:

Այս ճշմարտությամբ ոգևորվեց մեր Լուսավորիչը և իր հոր գործած չարիքը ջանաց քավել՝ Տրդատի մոտ ծառայության անցնելով: Ուրեմն, եթե որդիներն ու հայրերը փոխադարձաբար չքավեն միմյանց մեղքերը, այդ մեղքերն իբրև պարտք կծանրանան ապագա սերունդների վրա, և Արդար Պարտատերը խստությամբ կպահանջի այդ մեղքերի հատուցումը վերջին շառավղից: Ուստի՝ ինչպես ծնողները չպիտի գայթակղեցնեն իրենց զավակներին, այդպես և որդիներն են պարտավոր քավել ծնողների մեղքերը:

Ինչպես որդիներն են պարտավոր ծնողներին սիրել, հարգել, հնազանդվել և երախտագետ

ու բարոյապես փոխհատուցող լինել, այդպես էլ ծնողներն են պարտավոր ծնելուց հետո ջերմեռանդությամբ սնել, խնամել, դաստիարակել իրենց զավակներին՝ առանց իրենց վնասակար հատկություններով և տկար բնավորությամբ նրանց գայթակղեցնելու, որպեսզի զավակներն էլ ապագայում չվշտացնեն ու չդառնացնեն նրանց կյանքը, ինչպես Սողոմոնն է խրատում. «Մի՛ ծիծաղիր նրա հետ, որպեսզի ցավ չպատճառի քեզ, և հետո ատամներդ չառնեն դառնությունից... որպեսզի չլինի թե երբեք համառելով չհնազանդվի քեզ» (Սիրաք Լ 10-12): «Խրատի՛ր որդուդ, և նա հանգստություն կտա քեզ, զարդ կլինի քո հոգու համար (Առակ. ԻԸ 17):

Ծնողները պարտավոր են որդիների համար չխնայել բարին ու օգտակարը, պարտավոր են իրենց հանգստությունն ու վայելքները զոհաբերել զավակների ճշմարիտ կրթությանն ու դաստիարակությանը: Պարտավոր են մեծացնել, խնամել, պահպանել ու կրթել իրենց զավակներին՝ ո՛չ միայն իրենց համար, այլև՝ աշխարհի և Աստծո արքայության համար, քանի որ զավակներն Աստծո՝ ծնողներին պահ տված ավանդն են:

Ծնողները պարտավոր են որդիներին տված գիտության մեջ նախադասել աստվածգիտությունը կամ կրոնագիտությունը, որը խղճի իմացությունն ու ճանաչողությունն է, հոգու զարգացումը,

սրտի ազնվությունը և հետևաբար՝ Աստծո որդեգիրը լինելուն պատրաստվելը: «Հայրե՛ր, մի՛ զայրացրե՛ք ձեր որդիներին, այլ մեծացրե՛ք նրանց Տիրոջ խրատով և ուսումով» (Եփես. 2 4):

Նույնպես և որդիներն իրենց ծնողների համար ոչ մի ջանք չպիտի խնայեն: Պետք է խորհրդածեն, մտածեն ծնողների դրուժյան, կարգավիճակի ու կենսական պայմանների մասին և ըստ այդմ՝ չափավորեն իրենց մեծամեծ պահանջները, որոնց կատարումը գուցե թե ճնշի ծնողների ծանր կացությունը:

Զավակները պիտի ջանան, որ իրենց ստացած գիտությունն ու ուսումը հիմնավոր և օգտակար լինեն ինչպես իրենց, այդպես էլ ծնողների ու հասարակության համար: Նրանք իրենց ուսումով և ստացած գիտելիքներով չպիտի հեռանան իրենց Արարչից և չպիտի մոռանան Նրան, այլ առավել ևս պիտի մոտենան Նրան ու առավել հաստատուն կապով միավորվեն Նրա հետ, քանի որ Աստված է մարդկային կյանքի Նպատակը, և Նրանից է ամենայն բարություն ու օգտակարություն:

Զավակներն իրենց ստացած ուսման և գիտելիքների շնորհիվ էլ ավելի պիտի հարգեն ու պաշտեն հայրենական Եկեղեցին և Եկեղեցու աստվածաշնորհները, անձնվիրաբար պիտի կատարեն Եկեղեցու բոլոր պատվիրաններն ու որդեգրվեն Աստծուն:

Անհիմն և սուտ է այն կրթությունը, որին զուգահեռ չի ընթանում ճշմարիտ աստվածգիտության ուսումը, այն է՝ պարտականությունների գիտակցումը և իրավունքների հավատարմաբար գործադրությունը: Այդպիսի որդիները բարի կյանք են ունենում և խաղաղությամբ են ապրում իրենց օրերը, և ընդհակառակը, այդ բնական օրենքին հակառակվող, այսինքն՝ Աստծո և ծնողների հանդեպ ապերախտ ու երախտամոռ գտնվող զավակներն աշխարհում անհանգիստ կյանքով են ապրում և զրկվում են Աստծո որդեգրությունից:

Իսկ ծնողներն էլ չպիտի զանազանություն դնեն իրենց որդիների միջև, այսինքն՝ չպետք է սիրեն, պատվեն, խնամեն ու դաստիարակեն գեղեցիկին, վայելչակազմին ու առողջին և արհամարհեն, ատեն ու անուշադրության մատնեն տգեղին, հիվանդին, կարճահասակին, կույրին, կաղին և սապատավորին, այլ ամենքի հանդեպ հավասարապես պիտի տածեն իրենց խնամքը՝ գիտակցելով, որ իրենց զավակների համար իրենք Աստծո պատկերն են կերպավորում այս աշխարհում: Եվ ինչպես Աստված զանազանություն չի դնում, այլ բոլոր արարածներին հավասարապես է բաշխում Իր արեգակը, անձրևն ու բոլոր բարիքները. «Քանի որ Նա Իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա և անձրև է թափում արդարների ու մեղավորների վրա» (Մատթ. 2 45), այնպես էլ պետք


է ծնողները վարվեն, քանի որ որդիները նրանց են նմանվում թե՛ բարության, թե՛ չարության մեջ:

Մնողական պարտականություններն են ստանձնում նաև ծնողների փոխարեն կարգված հոգաբարձուները կամ խնամակալները, որոնք նույն վերաբերմունքը պիտի ցուցաբերեն որբերի հանդեպ, որոնք հանձնվել են իրենց խնամատարություն ու հոգատարությունը, տերերը՝ իրենց ծառաների, քահանաները՝ իրենց ժողովրդի հանդեպ, ուսուցիչները՝ իրենց աշակերտների, և մանավանդ՝ կնքահայրերը՝ իրենց սանիկների նկատմամբ:

Նույնն է նաև հակառակ պարագայում, այսինքն՝ փոխադարձաբար որդիական պարտքին են ենթակա որբերը՝ հանդեպ իրենց հոգաբարձուների և խնամակալների, ծառաները՝ իրենց տերերի, ժողովուրդը՝ քահանայի, աշակերտները՝ ուսուցիչների, սանիկներն էլ իրենց կնքահայրերի նկատմամբ և այլն:

Ինչպես ծնողներին և զավակներին, այնպես էլ ծնողական ու որդիական պարտքը ստանձնած վերոհիշյալ ենթականերին ո՛չ միայն մարմնավոր պարտավորվածության կապը պիտի գուգի և միացնի, այլև, որ ամենագլխավորն է, հոգևորը, այսինքն՝ բարոյականը, առանց որի նրանց բոլորի կապը կլինի սոսկ մարմնավոր և ուրեմն՝ հանուն անձնական շահերի, որը կբերի գայթակղություն, զրկանք, մեղք ու հանցանք:

ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆ



«Մի՛ սպանիր» (Ելք Ի13)

Այս պատվիրանով Աստված արգելում է մարդասպանությունը, որովհետև մարդու արարչագործության նպատակը ընկերակցական և ոչ թե միայնակեցական կենցաղավարությունն է, ուստի մարդը գազանի կվերածվեր, եթե մարդասպանությունն իր համար օրինական լիներ:

Մարմնավոր սպանության կամ մարդասպանության շատ տեսակներ կան.

ա) Ինքնասպանություն. դա այն է, երբ մարդ թույլ է լինում՝ անկարող՝ ծառայելու իր կոչմանը և հուսահատվում է մարմնական կյանքի անհաջողություններից, որոնց պետք է խորագիտությամբ համբերեր՝ ըստ աստվածային օրենքների ու պատվիրանների: Այդպիսի մարդը, այլևս չուզենալով շարունակել իր դառնացած ու վշտալի կյանքը, ինքնասպանությամբ վերջ է դնում այդ կյանքին: Առանց փոքր-ինչ խորհրդածելու այն հարցի շուրջ, որ նա ոչ թե հանգստություն և բարեբախտութ-

յուն վայելելու համար է ծնվել այս աշխարհում, այլ չարչարանք, վշտեր, նեղություններ ու անհաջողություններ կրելու և երկայնամիտ համբերություն մը այդ բոլոր շարիքներին հանուն Աստծո փառքի դիմանալու համար՝ ըստ այն խոսքի, թե՝ «Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ամեն տեսակ շար խոսք՝ սուտ ասեն: Ցնծացե՛ք և ուրախացե՛ք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է» (Մատթ. Ե 11-12), «Մտե՛ք նեղ դռնով. ինչքա՛ն լայն է դուռը և ընդարձակ՝ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, և բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքա՛ն անձուկ է դուռը և նեղ՝ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթ. Է 13-14):

Անձուկ դուռը և նեղ ճանապարհը Հիսուս նմանեցրեց հուսահատված, անհաջող, վշտերով ու դառնություն մը լեցուն կյանքին, որից, սակայն, համայն տիեզերքի միակ իմաստուն էական ու տիրականը, որը մարդն է, ամենևին չպիտի հուսահատվի, այլ պետք է ընդունի այն իբրև դժվարին ճանապարհ, որը տանում է դեպի ապահով և երջանիկ նավահանգիստ, որ է հավիտենական կյանքը:

Մանավանդ եթե սրան հավելենք այն ճշմարտությունը, որ շարիքները, վնասները, անհաջողությունները և հուսահատությունները, մեծավ մասամբ, ոչ թե Աստծուց են գալիս մարդկանց վրա,

այլ մարդկանցից են ծնվում ու առաջանում, ուրեմն մարդիկ պետք է հնարավորինս դրանց առաջն առնեն, այլ ոչ թե՝ հուսահատությանմբ վերջ տան այն կյանքին, որի սեփականության իրավունքը պատկանում է Ամենախնամ Արարչին և ոչ թե՝ իրենց:

բ) Եղեռնագործություն կամ ընկերասպանություն. դա այն է, երբ մարդ, բոլորովին հակառակ իր կոչմանը, ոտնահարելով ի բնե իր վրա դրված ընկերասիրության և կարեկցանքի վսեմ պարտավորվածությունը, կա՛մ նախանձի, ատելության ու թշնամանքի, կա՛մ դրամական ու բազմատեսակ այլ շահերի պատճառով սպանում է իր ընկերոջը կամ օտարին, սիրելիին կամ թշնամուն՝ նրանց արյամբ հագեցնելով իր անհագ ծարավը:

գ) Մանկասպանություն. սա վերաբերում է այն ծնողներին, որոնք ամուսնությունը սոսկ իրենց մարմնական հեշտասիրության կարիքները բավարարելու և ոչ թե՝ որպես որդեծնության ու ընկերական կենակցության միջոց համարելով՝ տարբեր դեղորայքներով արգանդում ոչնչացնում են մանուկների կյանքը և գործում են որդեսպանության անքավելի հանցանքն ու անթույլատրելի մեղքը:

Արդյոք այդպիսի ծնողները չե՞ն սարսափում այն սոսկալի Դատավորից, որի առաջ այդ սպանված զավակներն իրենց «ծնողներից» պիտի հետ պահանջեն այն կյանքը, որը վերջիններս մեռցրել էին: Ինչպիսի՞ զարհուրելի տեսարան և ինչպիսի՞

քստմենցուցիչ դրուծյուն՝ որդեսպան ծնողների համար:

Արդյոք ավելի լավ չէ՞ր լինի, որ զավակ ունենալ չցանկացող ծնողներն ամենևին իսկ չամուսնանային, կամ՝ ավելի խելամիտ չէ՞ր լինի արդյոք, որ քիչ զավակներ ունենալ կամեցող ծնողները պահեին ողջախոհության կամ որ նույնն է՝ չափավորության սուրբ կանոնը: Ժամանակակից ծնողները թող մտածեն այդ մասին:

դ) Մենամարտական սպանություն՝ դուել. դա այն միջոցն է, որով մարդ իր անարգված պատիվը վերականգնելու համար կամ էլ վրեժխնդրությունից զրդված՝ իր ընկերոջը հրավիրում է մենամարտի և կամ սպանում է, կամ՝ սպանվում: Արդյոք խելամիտ և գովելի չէ՞ր լինի, եթե այդ մենամարտը հոգևոր լիներ, ո՛չ թե՝ հանուն պատվի, վրեժի կամ ուրիշ սնոտի բաների, այլ՝ հանուն Հիսուսի, այսինքն՝ մենամարտողներն աշխարհի հաղաղարարի սիրո համար զոհաբերեին իրենց կրքերը, վրեժն ու պատիվը և փոխանակ սպանության՝ փարվեին ու գրկեին միմյանց սիրո համբույրով և ներողամտաբար խոնարհվեին իրար առաջ:

ե) Ակամա կամ պատահական սպանություն. սա կատարվում է բացառապես անզգուշությամբ և ոչ թե՝ չարախորհուրդ նպատակներով: Այդպիսի դեպքերում սպանողը, ըստ Սուրբ Գրքի, ազատ է համարվում սպանության մեղքից. «Այդտեղ

ապաստան թող գտնի այն մարդասպանը, որ նախապես թշնամություն չի ունեցել իր այդ մերձավորի նկատմամբ և նրան սպանել է ակամա» (ԲՕրին, ԺԹ 4): Դրա համար հնում ապաստարաններ և տաճարներ կային, ուր փախչում էին ակամա սպանություն գործողները և փրկվում էին՝ ըստ աստվածագիր օրենքի:

Սակայն, Հիսուս, որ միշտ հոգևոր խորհուրդներով էր լիացնում մարդկանց սրտերը, լրացրեց այս վեցերորդ պատվիրանը՝ ուսուցանելով, որ սպանություն ասելով՝ չպետք է հասկանանք միայն կյանքից զրկելը կամ արյուն թափելը, այլ՝ ամենաշնչին խոսքն անգամ, եթե այն վրեժխնդրության և ընկերոջը չարիք հատուցելու նպատակն ունի, պետք է սպանություն համարել, ինչպես ասում է Ինքը՝ ճշմարտության Քարոզիչը. «Ասել եք, թե ինչ ասվեց նախնիներին. «Մի՛ սպանիր», որովհետև, ով որ սպանի, ենթակա կլինի դատաստանի: Իսկ Ես ձեզ ասում եմ, թե՝ ամեն մարդ, որ զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի, և ով որ իր եղբորն ասի՝ հիմար, ենթակա կլինի ատյանի, և ով որ իր եղբորն ասի՝ ապուշ, ենթակա կլինի գեհենի կրակին: Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելու լինես և այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի, քո ընծան թող սեղանի առաջ և գնա՝ նախ հաշտվի՛ր քո եղբոր հետ և ապա ե՛կ քո ընծան մատուցի՛ր» (Մատթ. Ե

21-24): Իսկ ահա առաքյալն ասում է. «Ամեն ոք, ով ատում է իր եղբորը, մարդասպան է» (Ա Հովհ. Գ 15): Ահավասիկ, սա՛ է հոգեպես կամ բարոյապես սպանությունը:

Սրանից եզրակացնում ենք, որ ամենաթեթև խոսքը, որը նպատակ ունի վրեժխնդրության, այն է՝ դիմացինի սիրտը խոցելու, վիրավորելու նրա հոգին և վրդովելու հոգեկան խաղաղությունը՝ սպանություն է, որովհետև վրեժխնդիր հոգով է ասված, և այդ խոսքը չի մոռացվելու Աստծո անհուն իմաստության առջև, այլ աստվածային արդարադատությունը հաշիվ է պահանջելու այն արտաբերողից, որովհետև վրեժխնդրության հատուցումը Աստծուն է պատկանում և ոչ թե՛ մեզ. «Խնքներդ վրեժխնդիր մի՛ եղեք, սիրելիներ՛, այլ թո՛ւյլ տվեք, որ Աստծու բարկությունը կատարի այն. որովհետև գրված է. «Իմն է վրեժխնդրությունը, և ես կհատուցեմ», - ասում է Տերը» (Հռոմ. ԺԲ 19):

Ծնողներն իրենց լեզվով, վարմունքով և կենցաղավարությամբ ոչ միայն մարդասպանություն են սովորեցնում իրենց որդիներին, այլև իրենց զավակներին մեծացնում են որպես մարդասպաններ, ինչպես, օրինակ.

ա) Նրանք իրենց զավակների յուրաքանչյուր ինքնակամությունը՝ քմահաճույքը կատարելով, գազանություն են սերմանում նրանց սրտում և հոգում, ու որոշ ժամանակ անց, երբ այդ նույն մա-

նուկները մեծանում են, և իրենց կամքը կամ պահանջները չեն կատարվում, նրանք արդեն պատրաստ են լինում արյան մեջ թաթախելու իրենց ձեռքերը և ամեն տեսակի անազնիվ միջոցների դիմելու, որպեսզի իրենց կամքը կատարվի:

բ) Ծնողներն իրենց զավակների ներկայությամբ վարձկանին զրկում են վարձատրությունից ու անպատիվ և անազնիվ վարմունքով հուսահատեցնում են այդ խեղճ աշխատավորին: Զրկանքի ու անազնիվ վարմունքի այս կերպն ընդօրինակելով՝ զավակներն այն դարձնում են իրենց գաղափարախոսությունը և հետևաբար մարդասպաններ են դառնում, քանի որ զրկանքի ենթարկելը մարդասպանություն է. «Եթե դու ծառա ունես, նրա հետ եղբոր նման վարվիր, քանզի նրա կարիքը կզգաս, ինչպես քո անձի կարիքը» (Սիրաք Լ 31):

գ) Նրանք իրենց առևտրական, դատական, կալվածային և ուրիշ շատ այլ գործերի հաջողության համար իրենց զավակների ներկայությամբ կամ նրանց հայտնի պայմաններում զրկում են շատերին, դատապարտում են դատավորների առաջ, մինչև անգամ մարդասպանների են կաշառում մեծ գումարներով՝ իրենց հակառակորդների կյանքն աշխարհի երեսից վերացնելու նպատակով: Այս բոլոր եղեռնագործությունները որդիները տեսնելով՝ դրանք սովորում են դեռ մանուկ հասակից: Ծնողների այս դաժան գործելակերպը զավակների հատկա-

նիշն ու էության մի մասն է դառնում, և նրանք մեծանալով՝ դառնում են նույնպիսի հրեշներ և դեռ մի բան էլ ավելի, քան իրենց ծնողներն էին՝ պատրաստ լինելով իրենց շահն ու վաստակը բազմապատկել ընկերոջ թափած արյան կաթիլների միջոցով:

դ) Նրանք իրենց որդիների դաստիարակությունը վստահում են օտարներին և խնայում են իրենց ժամանակը, փսոսում են զոհաբերել իրենց հանգիստն ու զվարճութունները զավակների կրթությանն ու դաստիարակությանը: Շատ հաճախ առանց քննելու ընտրում են դպակների ու իրենց մատաղ զավակներին լիովին վստահում են նրանց: Սակայն այդ ո՞ր մի դպակը կարող է ծնողից ավելի շատ սիրել ու ավելի լավ դաստիարակել զավակներին: Եվ չէ՞ որ հանցանք են գործում ծնողները՝ անձնական վայելքների ու զվարճութունների պատճառով փսոսալով ժամանակ հատկացնել զավակների դաստիարակությանը:

Արդյոք օտար դաստիարակը կարո՞ղ է նրանց որդիների ու զավակների սրտին ազդի և կրոնի հանդեպ սեր ու գաղափար ներշնչել: Չէ՞ որ մանուկները օտար դաստիարակի կամ դաստիարակչունու ձեռքի տակ խորթ և անհարազատ, անպետք ու մեռյալ ներկայացուցիչներ են ձևավորվում իրենց ազգի, նմանապես և՛ Եկեղեցու համար:

Եվ վերջապես, այդ ո՞ր մի դպակը ծնողից ավելի շատ կմտածի իր խնամքին հանձնված օտար

մանուկների բարվոք կրթության մասին: Մի՞թե բարձր դասակարգին պատկանող մեր մայրերը ժամանակ չունեն զբաղվելու իրենց հարազատ զավակների դաստիարակությամբ: Ո՞րն է նրանց գործը, այցելություններ, հրավերներ, թատրոններ, պարերեկույթներ, դիմակահանդեսներ, զբոսանքներ, զանազան դրամական խաղեր, ինչպես՝ թղթախաղ, լոտո և այլն: Ահավասիկ արիստոկրատ ծնող-մոր զբաղմունքը, որով տարված լինելով՝ «խեղճը» ժամանակ չի ունենում դաստիարակելու իր հարազատ որդիներին և նրանց հանձնում է անհարազատ հայրերին ու մայրերին: Այդպիսով անմեղ երեխաների սերը բաժանվում է երկուսի՝ հարազատ և անհարազատ ծնողների միջև:

Երեխաները որքան սիրում ու հարգում են ծնողին, նույնքան էլ սիրում ու մեծարում են խնամակալներին ու խնամակալուհիներին: Ուրեմն ինչո՞ւ այդ ծնողներն իրենց ծնողների գումարները վատնեցին իրենց ուսման ու կրթության վրա, ուրեմն ինչո՞ւ տարիներ շարունակ հալումաշ եղան ուսումնարաններում, մի՞թե նրա համար, որ միայն զվարճանան և իրենց զավակների կրթությունն էլ օտար դաստիարակի հանձնեն: Ո՛չ և ո՛չ:

Մեզ՝ ժամանակակից և իրենց՝ արիստոկրատ համարող ծնողները, այդպիսի ընթացքով գնալով, շատ մեծ սխալ են թույլ տալիս: Արդյոք նրանք գիտե՞ն, թե իրենց զավակներն ինչեր են սովորում

այդ դայակներից: Վաճառական արիստոկրատն արդյոք գիտե՞, թե ինչ պատճառով է, որ իր որդիները որոշ ժամանակ անց չեն հավանում իրեն. ո՛չ իր լեզուն, ո՛չ իր ապրելակերպը, ո՛չ ազգային սովորությունները: Եթե չգիտե, թող իմանա, որ պատճառն այն օտար դաստիարակն է, որին նա վստահել էր իր որդիներին: Ծնող-մայրը բացարձակապես իրավունք չունի խնայելու որդու համար այն, ինչ որ ինքը ստացել է և ունի նրա համար: Ծնողը ուսում և կրթություն է ստացել ոչ միայն իր, այլև իր զավակների համար: Նա պարտավոր է այդ կրթությունը փոխանցել իր որդուն: Նա պարտավոր է ընկերանալ իր զավակների հետ, խաղալ, զբոսնել, ժամանակ անցկացնել և միշտ մնալ նրանց մայրն ու սկզբնական և ճշմարիտ դաստիարակը: Նա պարտավոր է զոհաբերություններ զնալ իր որդիների դաստիարակության համար, նրանց ներշնչել ազգասիրություն և կրոնասիրություն, ընկերասիրություն ու աստվածասիրություն և երախտագիտության ազնիվ զգացում: Նա պարտավոր է ամեն օր հետաքրքրվել իր որդիների ուսումնական կյանքով և իմանալ՝ արդյոք կարո՞ղ է օգնել իր զավակին ուսման գործում:

Եվ վերջապես, խելացի ու կիրթ մայրը պետք է զբաղվի իր զավակներով, իր ամուսնով ու իր տնով և ոչ թե՝ արտաքին զվարճանքներով: Խելացի ու իմաստուն մայրն անպատվություն պիտի համարի

իր որդիներին օտար դայակի խնամակալությանը հանձնելը: Եվ եթե ապագայում նա լաց է լինում, ապա դրա պատճառն այն է, որ որդու սկզբնական կրթությունը նա չի տվել, այլ՝ օտարը: Հարազատ և որդեսեր մոր համար աշխարհիս երեսին ավելի քաղցր ու գրավիչ ի՞նչ կա, եթե ոչ՝ իր որդիներն ու նրանց հետ իր զբաղմունքը: Ուրեմն ինչո՞ւ են մայրերը փախչում իրենց այդ քաղցր պարտականությունից: Թող արիստոկրատ մայրերը խորհրդածեն այս խնդրի վերաբերյալ: Ես հույս ունեմ, որ նրանք կզգան, թե որն է ճշմարիտը, և կտարբերեն օգտակարը վնասակարից:

ե) Նրանք խստություն փոխարեն գգվում ու փայփայում են իրենց զավակների շատ պակասավոր ու վնասակար կողմերն ու հատկանիշները, որի պատճառով երեխան ինքնակամություն և կամակորություն (քմահաճույք) է ձեռք բերում: Չափավորության փոխարեն շռայլություն են սովորեցնում իրենց զավակներին՝ թե՛ զարդարանքների, թե՛ մեծարժեք հանդերձների և թե՛ ամեն տեսակ պճնասիրության մեջ:

Դեռ մանուկ հասակում իրենց զավակների մեջ արթնացնում են սեր դեպի պճնասիրությունը՝ մանյակներով զարդարելով նրանց պարանոցները, գինդերով՝ ականջները, ապարանջաններով՝ բազուկները, օղերով ու մատանիներով՝ մատները՝ այդպիսով շռայլություն քարոզելով:

Ավելի լավ ու օգտակար կլինեն՝ այդ ակնեղենների ու ոսկեղենների փոխարեն նրանց սիրտն ու հոգին զարդարելն ընկերասիրությամբ, կարեկցանքով, համեստությամբ և պարկեշտությամբ, ամոթխածությամբ, ազգի և եկեղեցու, ծնողի ու Աստծու սիրով և փափագով: Սրանք են օգտակար և ազնվացնող զարդարանքները, որոնցով պիտի փայլի խելացի ու իմաստուն հայ ծնողի որդին և զավակը, մանավանդ՝ աղջիկը:

Մինչդեռ ծնողներն իրենց զավակներին թանկարժեք ու զարդարուն զգեստներ են հագցնում՝ փոխանակ պարզ և անպաճույճ շորեր հագցնելու, և այդպիսով զավակների համար պատճառ են դառնում միայն սեփական զարդարանքների ու հանդերձների մասին մտածելու:

Արգելելու փոխարեն՝ նրանց թույլատրում են գնալ շուայլութունների և զվարճանքների վայրեր՝ թատրոններ, դիմակահանդեսներ, պարերեկույթներ, համերգներ, որոնց պատճառով նրանք օգուտի փոխարեն վնաս են կրում, որովհետև ժամանակը չէ, դեռ վաղ է նրանց տարիքի համար:

Ավելի լավ կլինեն, որ ծնողները նրանց այդպիսի վայրեր գնալու թույլտվություն տալու փոխարեն՝ առաջնորդելն դեպի Աստծո տաճարներ, հիվանդանոցներ, թշվառ և աղքատ ընտանիքներ, վշտացածների ու սգավորների մոտ և մինչև իսկ՝ դեպի բանտեր՝ իրենց զավակներին բացատրելով այդ ամենի նշանակությունը:

Դա այնպիսի կենդանի դաս կլինի երեխաների համար, որ, անկասկած և հաստատ, օգուտ կբերի մշտապես: Ահա թե ինչու է բազմափորձ Սողոմոն իմաստունն ասում. «Իմաստունի սիրտը սգո տանն է, իսկ հիմարի սիրտը՝ ուրախության տանը: Խնջուքի տուն գնալուց լավ է սգո տուն գնալը, որովհետև դա է ամեն մարդու վախճանը» (Ժող. Ե 5,3):

Թույլ տալով ընթանալ վերոնշյալ վնասակար ուղիներով՝ ծնողներն առանց չափազանցության սպանում են իրենց որդիների մեջ ազնվությունը, կարեկցանքը, չափավորությունը և շատ այլ առաքինի հատկանիշներ: Մինչդեռ նրանք պարտավոր են իրենց զավակներին ուսուցանել, վարժեցնել և դաստիարակել աստվածասիրության և ընկերասիրության, ազգասիրության ու ծնողասիրության, եկեղեցասիրության և կրոնասիրության և ամեն տեսակի գթասիրական ու բարեգործական հատկանիշներով: Դրանք աստվածային պատգամներ են, որոնք պետք է ծնողներն ուսուցանեն իրենց զավակներին միշտ և ամեն ժամանակ, ինչպես պատվիրում է Սուրբ Գիրքը. «Դուք դրանք սովորեցրե՛ք ձեր որդիներին և դրանց մասին խոսեցե՛ք տանը նստելիս ու ճանապարհ գնալիս, պառկելիս ու վեր կենալիս: Դրանք գրեցե՛ք ձեր տների մուտքերին ու դռների վրա, որպեսզի ձեր կյանքը երկար լինի երկրի վրա» (Բ 0ր. ԺԱ 19-21):

Շատերը ծնողների վերոնշյալ թերի ու սխալ վարմունքով են առաջնորդվում ընկերների, թշնա-

մինների, տերերի, ծառաների, ամուսինների, աշակերտների, ուսուցիչների, մշակների և այլոց հետ իրենց հարաբերություններում: Եվ թեպետ սրով չեն սպանում, ու արյունահեղություն չի լինում, սակայն թունավորում ու գայթակղեցնում են սիրտը, հոգին ու ամբողջ կյանքը: Եվ նմանատիպ մարդասպանությունն ավելի չար է, քան՝ սրով սպանությունը:


Բացի ձեռքի կամ սրի, լեզվի ու վարմունքի միջոցով կատարվող սպանությունից՝ լինում է նաև սրտով ու մտքով սպանություն: Եթե մեկը սրտանց ցանկանում է իր ընկերոջ կամ թշնամու ձախորդությունն ու անկումը, դա կատարվի, թե ոչ, միևնույն է, նրա սրտի այդ ցանկությունն արդեն իսկ սպանություն է, հետևաբար՝ այդպիսի մեկը սրտով մարդասպան է, քանի որ նա ցանկանում էր դիմացինի սպանությունը, և եթե դա լիներ, նա պիտի ուրախանար՝ հասած լինելով իր շար նպատակին:

Նույնպես և նա, ով մտածում է զրկել իր ընկերոջը կամ թշնամուն՝ նենգության զանազան թակարդներ պատրաստելով ընկերոջ համար, լինի դա, թե ոչ, միևնույն է, դա արդեն իսկ նրա կողմից գործված շարիք է, ուստի այդպիսի մարդը մտքով մարդասպան է, որովհետև եթե նրա շարախորհուրդ մտածումը իրականանար, նա կուրախանար՝ հասած լինելով իր շար նպատակին՝ սպանությանը:

Ահա սրանք են այն հզոր պատճառները, որոնք մեզ հեռու են պահում մեր երկնավոր Հորից, որոնք դառնացնում են մեր Աստծու կամքի՝ մեր հանդեպ ցուցաբերած քաղցրությանը, որոնք Աստծո հայրական սերը, արարչական խնամքը, նախախնամական գութը փոխարկում են ատելության և անտարբերության: Ահա այս պատճառներով են մեր աղոթքները, մեր պահքը և ողորմությունները զուր անցնում: Այս պատճառներով է Աստված մերժում մեզ և հրաժարվում լսել մեր լացի ու աղաղակի ձայները, ինչպես Նա Ինքն է ասում մեզ մարգարեի բերանով. «Եվ ասում են. «Այդ ինչպե՞ս է, որ մենք ծով պահեցինք, և դու չտեսար, զրկանքների ենթարկեցինք մեզ, և դու չիմացար: Արդ, ձեր ծոմապահության օրերին ձեր ցանկություններն եք կատարում և կսկիծ պատճառում բոլոր նրանց, ովքեր ենթակա են ձեզ: Հակառակության և կռիվների մեջ եք պահում և բռնաքահարում տկարին: Իսկ իմ ինչի՞ն է պետք այդպիսի ծոմապահության օրը. դուք պիտի գաք բողոքեք ինձ, և ես չպիտի լսեմ ձեզ» (Ես. ԾԼ 3-4):



ՅՈԹԵՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆ



«Մի շնացիր» (Ելք Ի14)

Այս պատվիրանը արգելում է պոռնկությունը կամ շնությունը՝ պաշտպանելով ամուսինների փոխադարձ մտերմությունն ու հավատարմությունը, իսկ երիտասարդներին՝ ողջախոհություն ուսուցանելով, քանի որ շնությունն ամոթալի ուխտազանցություն է և ամենագարշելի հանցանքներից մեկը։ Այն խախտում է սուրբ ուխտը, որով աստվածագիր սուրբ ամուսնության միանում են երկու լծակիցները։

Շնությունն անհավատարմություն է, որն առաջ է գալիս այն սուրբ սիրո բացակայությունից, որը Քրիստոս անվանում է՝ լրումը բոլոր օրենքների՝ «Օրենքի լրումը սերն է» (Հռոմ. ԺԳ 10)։

Շնությունից կամ ամուսնական անհավատարմությունից ծնվում են ընտանեկան կամ ամուսնական կյանքի երջանկությունը վրդովող, արատավորող ու սևացնող դառը հետևանքներ, ինչպիսիք են՝ անբավարարությունը, կռիվներն ու վեճերը,

բամբասանքը, բողոքները և վերջապես՝ ամուսնության խզումն ու բաժանումը, մինչև անգամ՝ ոճրագործ սպանությունը:

Ի՞նչ պատասխան են տալու շնացող ամուսիններն իրենց խղճի և Աստծու առաջ, երբ իրենց որդիներին անխնամ ու առանց դաստիարակության թողած (խոսքը ճշմարիտ դաստիարակության մասին է)՝ զբաղվում են այդ զազիր ու գարշելի տուփանքներով՝ իրենց զավակներին կենդանի օրինակ տալով՝ նույնն անելու և նմանօրինակ վարքագիծ դրսևորելու արդեն իսկ հասուն տարիքում: Եվ հետո էլ դեռ զարմանում են, երբ աստվածային նախանձախնդրությունն ու արդար վրեժխնդրությունը հարվածում են իրենց ապագա սերնդին՝ ըստ այս խոսքի. «Ես եմ քո Տեր Աստվածը՝ մի նախանձոտ Աստված: Ես հայրերի գործած մեղքերի համար հատուցում եմ պահանջում նրանց որդիներից, ինձ ատողների երրորդ ու չորրորդ սերունդներից: Դրա փոխարեն ես ողորմածություն եմ ցուցաբերում ինձ սիրողների ու իմ հրամանները կատարողների հազար սերունդների նկատմամբ» (Բ Օր. Ե 9-10): Այս միտքն է արտահայտում նաև Սողոմոնի նախագուշակ սպառնալիքը. «Ամբարիշտների սերունդը չի շատացնի ճյուղերը» (Սիրաբ. Խ 15): Շնությունը կամ պոռնկությունը կամ էլ ամուսնական անհավատարմությունն այնքան խիստ և աններելի հանցանքներ են, որոնց վերաբերյալ Սուրբ

Գիրքը պատուհասների լեցուն սպառնալիքներ է նշում, ինչպես, օրինակ՝ «Եթե որևէ տղամարդ շնանա ամուսնացած մի կնոջ կամ իր ընկերոջ կնոջ հետ, մահապատժի թող ենթարկվեն և՛ շնացողը, և՛ շնացյալը» (Ղևտ. Ի 10), «Փախե՛ք պոռնկությունից: Ինչ մեղք էլ որ գործի մարդ, այդ իր մարմնից դուրս է. իսկ ով պոռնկանում է, իր մարմնի դեմ է մեղք գործում» (Ա Կորնթ. Զ 18):

Պոռնիկներն ու շնացողները զրկվում են Աստծո արքայություն մտնելու իրավունքից, ինչպես ուսուցանում է մեզ առաքյալը. «Ո՛ր պոռնիկները, ո՛ր շնացողները... Աստծու արքայությունը չեն ժառանգում» (Ա Կորնթ. Զ 9-10):

Շնացող բնավորություն ունեցողը կատարելապես հիվանդ է և մինչև անգամ՝ իբրև հասարակության անդամ՝ մեռած է: Նրա հոգեկան ուժը մեռնում է, ընդունակությունները բոլորովին թմրում են, նրա մեջ վերջնականապես խեղդվում են կարեկցանքը, գութը և խորհուրդների հանդեպ սրբությունը: Նա միշտ հեռանում է խոկուն և խոհուն, զգաստ ու գործունյա անհատներից, կամ սիրում է առանձնություն, որի մեջ լինելով՝ նրա մտքերի ընթացքը նրան տանում է դեպի շնուծյան աշխարհը, կամ էլ շնացողը ձգտում է դեպի շնացողները՝ իր տուփանքին հագուրդ տալու համար: Դա մի այնպիսի ախտ է, որով հիվանդացած անհատն այլևս ընդունակ չէ խորհելու և կատարելու

Աստծո և ընկերոջ հանդեպ ունեցած իր սուրբ ու վսեմ պարտականությունները

Շնության կամ բղջախոհության սպանիչ միակ միջոցը ողջախոհությունն է, այլ կերպ ասած՝ պահեցողությունը կամ սրտի և մտքի նվաճումը: Ողջախոհության վերաբերյալ երիտասարդներին շատ իմաստնալից խրատներ է տալիս կյանքի ամեն տեսակ հանգամանքներում բազմափորձ Սողոմոն Իմաստունը, որը կարող ենք տեսնել այստեղ և այս գլխի մյուս հատվածներում. «Մի՛ նայիր շար կնոջը, որովհետև պոռնիկ կնոջ շուրթերից մեղր է ծորում, որ առժամանակ պարուրում է քիմֆդ, բայց հետո զգում ես, որ ավելի դառն է, քան լեղին, և ավելի սուր, քան երկսայրի սուրը» (Առակ. Ե 3-4), «Որդյա՛կ, թող քեզ չհաղթի կնոջ գեղեցկության ցանկությունը, թող չբռնվեն քո աչքերը նրանով, մի՛ հրապուրվիր նրա թարթիչներով» (Առակ. Զ 25): Ուրեմն ողջախոհը նա է, ով վճռում է զսպել իր սրտի ցանկությունները և սանձել իր մտքի ընթացքն ու թռիչքը: Նա, ով իր համար օրենք է սահմանում՝ երբևէ սրբին անսրբությամբ չնայելու, նա, ով գարշում է գրգռիչ և գայթակղեցուցիչ վայրերից և անձանցից: Նա, ով իր շռայլ բնավորությունն ու կամքը ենթարկում է չափավորության կանոնին, և վերջապես, նա, ով իր մտքի աչքերը հառում է իրեն Ստեղծողին և իր կոչման վրա՝ քննելով ու խորհրդածելով իր գոյության

պատճառի մասին: Բնական է, որ այդպիսի մարդն իր բարեխորհուրդ քննադատությամբ հաղթում է չարին:

Եվ թեպետ Սուրբ Գիրքը շնությունն ու պոռնկությունն իբրև մեծագույն հանցանք՝ դատապարտում է սարսափելի պատիժներով, սակայն Հիսուս մարդկային վսեմ և բարձր՝ հոգևոր ու մարմնավոր կյանքի նպատակի քայքայումն ու խախտումն է համարում այդ ախտը և աներկբա սահմանում է տալիս իր աստվածային խոսքերով. «Լսել եք, թե ինչ ասվեց. «Մի՛ շնանար», իսկ ես ձեզ ասում եմ, ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում» (Մատթ. Ե 27-28):

Ուրեմն՝ եթե մեկը տուփական ցանկությամբ է նայում կնոջը, նա արդեն իր սրտում մեղանշած է համարվում: Ինչպես սպանությունը կատարվում է լոկ սրտի չարակամությամբ, այդպես էլ շնությունը կատարվում է լոկ աչքի տեսությամբ և սրտի գայթակղությամբ:

Ուստի սրանից հետևում է, որ մարդն իր բնությունից այնքան բարձր պիտի կանգնի և այն աստիճան ողջախոհ ու լրջմիտ պիտի լինի, որ սանձի իր էությունն ու նրան տեղիք չտա գեղեցիկ կերպարանքների պատճառով գայթակղվելու, մտքի չարախորհուրդ ընթացքին և սրտի գայթակղությանը տրվելու:

Մարդն իբրև վսեմ և հանճարեղ էակ՝ բարձրաթուիչ հայացքով պիտի նայի ամենքին՝ ընդունելով և համարելով նրանց իբրև իր հայր, մայր, եղբայր, քույր և որդի, անգամ սրտով ցանկանալու իրավունք պիտի չտա ինքն իրեն, որովհետև սրտի ցանկությունը հավասար է գործի կատարմանը: Ցանկանալ սրտով՝ նույնն է թե՝ հնարավոր դեպքում կատարել սրտի ցանկացածը: Այդպիսով մեղքն արդեն իսկ կատարված է համարվում:

Այս պատվիրանը միայն ճամուսնացողներին չի վերաբերում, այլ նաև ամուսնացյալներին է պատշաճում, ինչպես որ տեսանք: Մարդն ու կինն իրենց ամուսնական կյանքը լուրջ իբրև հեշտասիրությունն ու տուփական ցանկությունները բավարարելու միջոց չպիտի դիտարկեն: Դա պարզ անասնական ցանկություն կլիներ: Այլ՝ ամուսնական կապի մեջ ամուսիններն ավելի վսեմ ու բարձր նպատակ պիտի հետապնդեն: Այդ նպատակը կենակցությունն ու որդեծնությունն է: Աստված մեր նախածնողներին ու նահապետներին շասաց, թե. «Հագեցե՛ք ձեր տուփական ցանկություններով», այլ ասաց. «Աճե՛ք և բազմացե՛ք»: Իսկ աճելն ու բազմանալը միայն որդեծնությամբ պետք է հասկանանք, և ո՛չ՝ այլ կերպ, քան՝ միայն ամուսնական կենակցությամբ:

Ուրեմն ամուսինները պետք է մտածեն և խորհրդածեն այն մասին, որ իրենց ամուսնական միավորությունը կամ կապը ոչ թե տուփական ցան-

կուլթյունները հագեցնելու նպատակն ունի, այլ միտված է ընկերական կենակցության և որդեծնության: Այն ամուսինները, որոնք ամուսնանում են լոկ առաջին նպատակի համար և չեն ձգտում որդեծնության, արդեն իսկ դատապարտված են և պատասխանատու՝ Աստծո առաջ, որովհետև ոչ միայն չընդունեցին և չիրագործեցին, այլև մերժեցին ու եղծեցին աստվածային օրենքների սահմանն ու կանոնը:

Շնուկյունը կամ պոռնկուկյունը կարող է լինել համբույրով, գրկախառնության, բազմատեսակ շոշափումներով, անամոթ և չարախորհուրդ նայվածքով, խոսքերով ու մտքով:

Շնուկյունն առաջանում է անգործությունից կամ ծուլությունից, պարերից կամ կաքավումներից, շռայլ զվարճություններից և զվարճալի վայրեր այցելելուց, ինչպիսիք են՝ պարերեկույթերը, թատրոնները, դիմակահանդեսները, համերգները և նմանատիպ այլ վայրեր: Թեպետ վերոհիշյալ փաղաքշանքները կամ նմանատիպ վայրեր այցելելը կարող են լինել սուրբ և օգտակար նպատակներով, սակայն դրանք գալթակղության միջոցներ են, որոնք մարդու խաղաղ դրուկյունը գրգռելով՝ դուրս են բերում այդ դրուկյունից և հասցնում են շնուկյան աստիճանի:


Թույլ բնավորության տեր երիտասարդները չէին սխալվի, եթե առժամանակ աշակերտեին

բազմափորձ Սողոմոն Իմաստունի խոսքերին, իսկ նա ասում է. «Մի՛ հաճախիր երգող ու կաքավող կնոջ մոտ, որպեսզի հանկարծ կույ չգնաս նրա լրբությանը: Երկար մի՛ նայիր կույսին, որպեսզի չգայթակղվես նրա հմայքով» (Սիր. Թ 4-5):

Չար ու վատ ոչինչ չկա, քանի որ ամեն ինչ բարի է ստեղծել ամենաբարի Արարիչը՝ բարի նպատակով և հոգուտ մարդկանց: Սակայն մարդու միտքը, որ մանկությունից չարի խնամքի տակ է, բարունշանակությունը փոխում է չարի: Սրանից նախ հետևում է այն, որ մարդ յուրաքանչյուր իրողություն և երևույթ պիտի ընդունի սուրբ մտքով՝ չընկալելով այն իբրև գրգռիչ և գայթակղեցուցիչ: Իսկ երկրորդ՝ քանի որ ամեն մի դյութանք, հրապույր և գայթակղություն նա չի կարող սառնությունամբ, առանց չնչին իսկ գայթակղության ընդունել՝ իր բնության թուլության պատճառով, ուստի մարդն ինքը պետք է հեռանա այդպիսի գրգռիչ և գայթակղեցուցիչ երևույթներից ու իրականությունից, որպեսզի չընկնի մեղքի մեջ, ինչպես խրատում է փորձառու իմաստունը. «Հնարավոր է արդյոք, որ մեկը կրակը պահի իր գոգի մեջ և շորը չայրի, կամ որևէ մեկը բոբիկ քայլի կայծ ու կրակի միջով և իր ոտքերը չայրի» (Առակ. 2 27-28):



ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆ



«Մի գողացիր» (Ելք Ի 15)

Այս պատվիրանն արգելում է գողություն և անելը՝ պաշտպանելով չափավորությունը և արդար վաստակով ձեռք բերված աշխատանքը: Որովհետև եթե մարդն իր դրուկյամբ բավարարվի և չափավորության կանոնով ընթանա, նրա վաստակն արդար կլինի, իսկ եթե ագահության ձգտի կամ շռայլ կենցաղավարության պատճառով աղքատության հասած լինի, այդ դեպքում նա պետք է զրկի ուրիշին և գողանա, իսկ գողության մեջ ո՛չ արդար վաստակ կա և ո՛չ էլ՝ չափավորություն: Մարդու կյանքի նպատակն է աշխատանքը և Աստված, կամ՝ աշխատանքն առ Աստված կամ ընկերը: Մինչդեռ շատերն իրենց կյանքի նպատակ են համարում աշխատանքը և անձը, կամ՝ աշխատանքն առ անձը և ո՛չ՝ ընկերը:

Ա. Աշխատանք առ Աստված կամ առ ընկերը, դա այն է, երբ մարդ, իբրև Արարչի ստեղծած էակ, կախում ունի Նրանից, և իբրև իր նմանների Հն-

կեր՝ կապ ունի նրանց հետ: Ուրեմն նրա աշխատանքի նպատակը պետք է լինի փառք և գոհություն մատուցելն Արարչին՝ իբրև հատուցում և հայտարար իր երախտագիտության՝ առ Աստծու անսահման բարիքը, և օգնություն ու կարեկցական սեր՝ առ ընկերը՝ իբրև պատվիրանապահության և պարտականության ճշմարիտ նշանաբան, ինչպես սովորում ենք Սուրբ Ավետարանից. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով և քո ամբողջ հոգով և քո ամբողջ զորությամբ և քո ամբողջ մտքով. և պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Ղուկ. Ժ 27-28):

Մարդը պարտավոր է աշխատել, քանի որ դրա համար է ծնված, և աշխատանքը պիտի լինի հոգևոր և մարմնավոր, որովհետև մարդը հոգուց և մարմնից բաղկացած արարած է. մարմնավոր աշխատանքը ջանք թափելն է՝ իր կենդանության, առողջության և հաջողության համար, և փոխանակ իր մարմնավոր աշխատանքի հաջողությամբ հպարտանալու և իրեն կորցնելու՝ օգնի անհաջողակ ընկերոջը և իր օգնությամբ ուրախանա, և բարձրացնելով իր մտավոր աչքերը դեպի իրեն հաջողություն և բարիք պարգևող Աստված՝ խոստովանի նրա ողորմությունը և շնորհակալ լինի Նրան: Ինչպե՞ս. հոգևոր աշխատանքով, իսկ հոգևոր աշխատանքը ճիգ գործադրելն է՝ միշտ անթերի կատարելու աստվածապաշտության և

աղոթասիրության, ընկերասիրության և բարեգործության պարտքը, ամեն քայլափոխի որոնելու Աստծու կամքը և հույս դնելու Նրա ամենակարող զորության վրա՝ միևնույն ժամանակ սարսափելով և վախենալով Նրա արդարությունից. և վերջապես՝ ամեն գործ կատարել ի փառս Աստծու և հօգուտ իրեն և ընկերոջ, այլ ո՛չ՝ ընկերոջ վնասով՝ ի շահ իր անձի: Այսպիսի աշխատանքի մեջ գողություն չի կարող լինել, որովհետև մարմնավոր և հոգևոր աշխատանքները կատարվում են միմյանց հանդեպ փոխադարձ վստահությամբ, մեկը մյուսի օգտի համար, և երկուսը միասին Աստծու փառքին են ծառայում: Մարմնավոր աշխատանքի նպատակն է հոգևոր կյանքը, իսկ հոգևոր աշխատանքը գտնում և մաքրում է մարմնավոր կյանքի պակասությունները:

Բ. Աշխատանք իր անձի համար և ո՛չ՝ ընկերոջ. դա այն է, երբ մարդ աշխատում է միայն մարմնավորապես՝ բոլորովին զանցառության և մոռացության տալով հոգևորը. նա աշխատում է ո՛չ թե Աստծո փառքի համար, կամ որ նույնն է՝ ընկերոջ օգտի համար, այլ միայն և հատկապես իր անձի բավականության, օգուտի, շահի և փառքի համար. նա, ագահության ցանկությամբ լցված, հեռանում է հոգևոր աշխարհից, մերժում է չափավորության գաղափարը, խեղդում է իր մեջ կարեկցության հո-

գին, չի կամենում տեսնել իրեն հավասար, ձգտում է ճոխանալ և բարձրանալ ամենքից՝ լոկ մարմնավոր կյանքի հաջողության ճոխությունը: Եվ ահա դրան հասնելու համար ստիպված է լինում դիմել գողության շարահյուսար և վնասաբեր միջոցներին. նա գողանում է. բայց ի՞նչ և ինչպե՞ս: Նա գողանում է իր ընկերոջ սիրտը, հոգին և խոսքը. նա գողանում է նրանց հավատը, հույսը և սերը. նա գողանում է նրանց մտերիմ բարեկամական հարաբերությունը և մինչև անգամ՝ ողջ կյանքը, և այդ ամենը ծառայեցնում է իր մարմնավոր հաջողություններին, փառքին և անարգ ճոխությունների նպատակին:

Ա. Նա պատվի է արժանացնում և մեծարում, սիրում է և պաշտում, ամեն տեղ գովում է իր ընկերոջը և ձևանում է նրան իբրև սրտակից բարեկամ, բայց ինչի՞ համար. որպեսզի նրա հաջողությունն իր ձեռքում պահի, ինքն ստանա նրա պաշտոնը, նրան վնասելով՝ ինքն օգտվի. և հաջողվում է նրան այս խարդախությունը, որովհետև խաբվելով մտերիմ կարծված իր բարեկամի շարահյուսար խորհուրդներից՝ զգվում է իր պաշտոնից, հեռանում ա՛յն աշխատանքից, որից ստանում էր իր ապրուստը, թողնում ա՛յն ասպարեզը, որի մեջ գործում էր հօգուտ իրեն և ընկերների, և, ահա՛, բարեկամ կարծված իր գաղտնի թշնամին օգտ-

վում է իր պաշտոնից, որից ինքը զրկվեց: Ի՞նչ անվանել ընկերոջ այս խարդախ հարաբերությունը, եթե ոչ՝ դաժան գողություն:

Ը. Նա բամբասում է և չարախոսում, մրոտում է և պատվազուրկ անում ընկերոջը: Ինչի՞ համար. որպեսզի նրա տեղը, նրա հաջողությունն ինքն ստանա, և հաջողվում է. այսօրինակ աշխատանքը չանվանե՞նք արդյոք գողություն:

Գ. Մինչդեռ ընկերը, վստահ նրա սիրո վրա, հավատում է նրան, և հաստատ ու աներկբա հուսալով նրա բարեկամությանը՝ ապահովության զգացում է ունենում: Եվ հանկարծ իրեն վնասված է զգում նրանից. նա իր ընկերոջ հավատի, հույսի, սիրո գող չէ՞ արդյոք:

Դ. Նա գողանում է մտերիմ ընկերոջ խոսքն ու խորհուրդը, միամտությունն ու բարությունը, և դրանցից օգուտ քաղելով՝ չարիք է նյութում նրա դեմ, փոսեր է փորում և, վերջապես, զրկում է նրան այն հաջողությունից, որում կար. որովհետև նախանձեց ընկերոջ հաջողությանը և օգտվելով նրա միամտությունից՝ գազանի նման հափշտակեց նրա բերանի պատառը՝ իր որկորը լցնելու. ի՞նչ անուն տանք այս տեսակ գողությունը:

Եվ ահա՛, մարմնավոր աշխատանքի այս բոլոր հանգամանքներն ամենագիշյա և դառը գողություններն են, որոնք շատ հաճախ են պատահում

ընկերական կյանքի և հարաբերությունների մեջ: Ինչի՞ համար, որովհետև աշխատանքը սոսկ մարմնավոր է, բացակա է հոգևորը:

Գողություն վերոնշյալ տեսակներից զատ, կան և այլ տեսակի գողություններ, ինչպես, օրինակ՝ ժամանակի, աշխատանքի կամ գործերի, մտքի կամ խորհուրդների, սրտի կարեկցության և հոգու ողորմածության, խոսքի և շարժումների և այլն, որոնցով մարդը թե՛ հոգևորապես և թե՛ մարմնավորապես վնասում է իրեն և ընկերոջը:

Ա. Ժամանակի գողություն է, երբ մարդն իր աշխատանքների և վաստակի ժամանակն անօգուտ և անշահավետ կերպով է անցկացնում՝ թե՛ ըստ հոգու և թե՛ ըստ մարմնի: Նա սիրում է ընդարմություն, դանդաղություն, պարապություն, ծուլություն. իզուր է ծախսում իր աշխատանքի առույգ ժամանակը, և երբ քաղցի վտանգն սպառնում է նրան, նա, այնժամ միայն արթնանալով, չի ամաչում ասել՝ «գործել չեմ կարող, մուրալ ամաչում եմ», և սկսում է գողությունը:

Բ. Աշխատանքի կամ գործի գողություն է, երբ մարդն իր ձեռքին ունեցած գործից կամ աշխատանքից տակավին չի շտապում օգուտ քաղել՝ կարծելով, թե հավիտենական կամ մշտական են իր ձեռքի գործն ու աշխատանքը՝ ամենեևս չենթադրելով, թե կարող է, ինչ-ինչ պատճառներով,

զրկվել այդ աշխատանքից, և ուրեմն, հույսը դնելով իր ձեռքի տակ եղած աշխատանքի վրա, շուայլաբար է կենցաղավարում՝ ամենևին չմտածելով ապագայի մասին: Կամ՝ պարտավորված չի զգում իրեն՝ իր աշխատանքի արդյունքից մաս հանել իր կարոտյալ ու զրկված ընկերոջը:

Չ. Մտքերի կամ խորհուրդների գողություն է, երբ մարդը, փոխանակ իր մտայնություն և խորհուրդներով ընկերոջ օգուտը, հաջողությունը և վերականգնումը խորհելու, ընդհակառակը՝ վնասը, անհաջողությունը և անկումն է մտածում ու խորհում, իսկ իր անձի համար՝ փառավորությունը, հաջողությունը, հեշտությունն ու փափկությունը: Նա իր մտքի և խորհուրդների մեջ ամենևին տեղ չի տալիս հոգևորին, միշտ լոկ մարմնավորն է նրա մտքերի և խոհերի առարկան:

Ղ. Սրտի կարեկցության և հոգու ողորմածության գողություն է, երբ մարդը, փոխանակ իր սիրտը կարեկցանքով և հոգին ողորմածությամբ ջերմացնելու, անգթորեն սառն է դառնում դեպի ընկերների թշվառությունը և ոտնահարված դրությունը: Սրանով նա գողանում է իր սրտի կարեկցանքն ու հոգու ողորմածությունը, որոնք Աստված դրոշմել է մարդու մեջ՝ իբրև ընկերային կյանքի հզոր շարժառիթներ, այլապես մարդու ընկերական կենցաղավարությունը չէր հասնի իր նպատակին, այսինքն՝

չէր կարող լինել կատարյալ: Օգնությունը կարեկից սրտի և ողորմած հոգու գործնական նշանն է: Ընկերոջն օգնել չսիրողը, նշանակում է, իր սրտի կարեկցության և հոգու ողորմածության գողն է:

Ե. Խոսքի և շարժումների գողությունն է, երբ մարդը, փոխանակ օգտակարը խոսելու և պատշաճ շարժումներ ցույց տալու նրանց, որոնք շրջապատում են իրեն, որպեսզի օգտվեն իր խոսքերից և շարժումներից, որովհետև դա է իր պարտականությունն ընկերոջ հանդեպ, ընդհակառակը՝ իր թունալից խոսքերով և գայթակղեցուցիչ շարժումներով թունավորում է իր ընկերոջը՝ ամբողջովին նրան գայթակղելով, այսինքն՝ հանելով նրան իր պարզ և միամիտ դրությունից՝ չարությունն է սովորեցնում և առաջնորդում է հանցանքի և մեղքի ճանապարհով: Այսպիսիներին խիստ սպառնալիք է հղում Հիսուս Սուրբ Ավետարանում՝ ասելով. «Անկարելի է, որ գայթակղություն չգա, բայց վա՛յ նրան, որի ձեռքով կգա: Նրա համար լավ կլինե՞ր, եթե իր պարանոցից երկանաքար վե՞մ կախվե՞ր, և նա ծովը գցվե՞ր, քան թե այս փոքրիկներից մեկին գայթակղեցնե՞ր: Զգո՛ւյ՜ ճղեք ձեր անձերի համար» (Ղուկ. ԺԷ 1-3): Այդպիսիներին և մարգարեն է վայ տալիս՝ ասելով. «Վա՛յ նրան, ով ընկերոջը պղտոր հրապույրներով է արբեցնում...» (Ամբ. Բ 15): Ուրեմն, մարդը, որ զգուշություն չի ցուցաբերում իր խոսքերի ու շարժումների մեջ և չի գոր-

ծաղրում դրանք՝ հօգուտ ընկերոջ, նշանակում է՝ նա գող է խոսքերի և շարժումների:

Մնողներն իրենց խոսքով և շարժումներով որդիների առաջին դաստիարակներն են, քահանաները՝ ժողովուրդների, ուսուցիչները՝ աշակերտների, մեծերը՝ փոքրերի, իշխանները՝ ենթակաների և այլն: Եթե հիշյալ հեղինակները չզգուշանան իրենց խոսքերի և շարժումների մեջ և գայթակղեցնեն իրենց լսողներին և տեսնողներին, նշանակում է՝ նրանք գողացան իրենցից, կամ որ նույնն է՝ խեղդեցին իրենց մեջ ազնիվ և օգտակար խոսքերն ու շարժումները, որովհետև ուսուցանեցին նրանց վատը, վնասակարը, չարը և զարշելին. ուրեմն՝ նրանք ազնիվ և օգտակար խոսքերի ու շարժումների գողեր են: Ավելորդ խոսելը, սուտը, երդումը, հայհոյությունը, անեծքը, բամբասանքը, չար խորհրդատվությունը՝ խոսքի գողություններ են, որովհետև պղտորում են ընկերոջ սիրտը, տագնապեցնում են նրա հոգին, վրդովեցնում և հուզում են նրա հոգեկան անդորրությունը և ամբողջապես գայթակղում են նրա խաղաղ կյանքը. այնինչ սրանց փոխարեն պետք է լինեին հարկավորն ու օգտակարը միայն՝ սակավախոսություն, ճշմարտախոսություն, օրհնություն, գովություն, աղոթք և բարի խորհրդատվություն: Նույնպես և՛ ավելորդ ու վնասակար շարժումները, այն է՝ պճնասիրությունը կամ զարդարանքներ սիրե-

լը, հանդերձասիրությունը, թղթախաղը կամ այլ տեսակ դրամական խաղերը, հաճախակի շռայլ հրավերները, բազմախորտիկ ճաշերը, շատ կամ ավելորդ սպասավորներ պահելը, մայրենի լեզվով չխոսելը, անհաշիվ և անպատշաճ ծիծաղը, կրոնական խոսակցությունից խորշելն ու հեռանալը, զվարճալի և շռայլ հանդեսներ հաճախելը և այսօրինակ բաները՝ շարժումների գողություններ են: Մինչդեռ սրանց փոխարեն պետք է լինեն՝ չափավորություն սիրելը և ավելորդն ատելը, մերկությունը ծածկող անպաճույճ և պարզ հանդերձներ հագնելը, արդար վաստակի վրա հիմնված աշխատանքը, հրավերներ կարճելը և դրանց պարզ և չափավոր ձև տալը, միայն հարկավոր և սննդարար ճաշ պատրաստելը և ո՛չ՝ բազմատեսակը, ինչպես նաև՝ բավականանալ սակավ, գործունյա և համեստ ծառաներով, սիրել և սովորել Մայրենի լեզուն և խոսել նույն լեզվով, որովհետև նա է հարազատը և սեփականը, ցածր ծիծաղել՝ համեստ կերպով և անհրաժեշտության դեպքում, սիրել կրոնական զրույցը, որովհետև դա է ազնվացնում սիրտը և կերակրում հոգին, և փոխանակ ուրախ և շռայլ հանդեսների հաճախելու՝ մերկերին հագցնել, կերակրել քաղցածներին, պատսպարել անտուն և պանդուխտ թափառականներին, գործ տալ համեստ, բայց անգործ պարապորդներին, այցելել հիվանդներին՝ կամ անձամբ, կամ դրամական օգնությամբ, բազ-

մամարդ և չքավոր գերդաստաններին և բանտարկյալներին՝ օգնելով և մխիթարելով նրանց:

Շարժումների վերոնշյալ տեսակներից զատ, որոնք մեր կարծիքով՝ գողություն են, կան և այլ տեսակի շարժումներ, որոնք նույնպես գողություն կարելի է անվանել, ինչպես, օրինակ՝

Ա. Հպարտություն, որ խեղդելով Հիսուսի քարոզած սքանչելի խոնարհությունը՝ գողանում է այն:

Բ. Նախանձ, որ կեղեքում է սիրտը, ճնշում է սերը և ատելություն է ժայթքում դեպի ընկերը. նախանձը սրտից գողանում է առ ընկերն ունեցած սերն ու բարի կամքը:

Գ. Բարկություն, որ գողանում է այն երկայնամիտ համբերությունը, որով, իրավամբ, պանծացավ Ս. Գրքի մեջ հիշատակված արդար Հոբբը՝ իբրև համբերության հեղինակ:

Դ. Ծուլություն, որ սպանում է ամենայն սեր ու եռանդ աշխատանքի հանդեպ. Սողոմոն իմաստունը ծուլերին առաջարկում է աշխատասիրություն սովորել մրջյուններից և մեղուններից: Կան բազում այլ տեսակի շարժումներ, որոնք գայթակղեցնում են տեսնողներին և նույնպես համարվում են գողություն, որովհետև մարդու թե՛ խոսքերը և թե՛ շարժումները միշտ պիտի ծառայեն ընկերոջ օգտին և բարօրությանը, այլապես՝ գողություններ են:

Ուրեմն, գողություն՝ նշանակում է չաշխատել, կամ ծուլանալ, կամ աշխատանքը ձեռնարկել ի վնաս հոգու և ընկերների և միայն՝ ի շահ մարմնի: Նա, ով իր աշխատանքը չի կապում Աստծո սուրբ Անվան կամ ընկերոջ օգտի հետ և միայն աշխատում է մարմնավոր նպատակով և սոսկ իր անձնական շահերի համար՝ նա գող է և նրա աշխատանքը՝ գողություն:

Մինչև այժմ մեր նշածները կարելի է անվանել հոգևոր կամ բարոյական գողություն, այժմ դիտարկենք մարմնավոր կամ նյութական գողությունը: Այսպիսի գողությունը բազմատեսակ է լինում, ինչպես, օրինակ՝

Ա. Հափշտակություն. երբ մարդը, վստահելով իր իշխանական զորությանը կամ հուսալով իր մեծ հեղինակությանը և պաշտոնին, առանց հարցնելու ընկերոջ իրավունքը և արդարության օրենքը, բռնի կերպով հափշտակում է իր ընկերոջ ունեցվածքը, կալվածքը, պաշտոնը և այլն՝ բնավ չխղճահարվելով և չզղջալով իր գազանային վարմունքի համար և նմանվելով Հովհան Ոսկեբերանի ասած՝ ճիվաղին և բոլոր նրանց, որոնց մասին ասել է երանելի հայրապետը. «Այսուհետև արժան չէ ասել ո՛չ թունավոր գազան և ո՛չ անմիտ անասուն, այլ՝ բյուրակերպ, բյուրագույն պիսակավոր¹ ճիվաղ»:

¹ Բծավոր, պուտավոր:

Բ. Զրկանք կամ զրկողություն. այն է, երբ մարդը, դրդված ազատության կամ նախանձի կամ թշնամության շարժառիթից, թե՛ հայտնի, թե՛ ծածուկ կերպով զրկում է ընկերոջը և խորամանկ խարդախությամբ կամ անիրավ իրավունքներով յուրացնում է ընկերոջ սեփականությունը: Զրկողական գողություն մեջ է մտնում ծառաների, մշակների և այլ աշխատավորների վարձը կտրելը կամ չտալը, որի մասին զգուշացնում է առաքյալը՝ ասելով այսպես. «Ահա՛վասիկ, ձեր դաշտերը մշակած մշակների վարձը ձեզ մոտ պահեցիք. ձեր կողմից զրկվածն աղաղակում է, և հնձվորների բողոքը հասավ Ամենակալ Տիրոջ ականջին» (Հակ. Ե 4): Խեղճին և տնանկին զրկելու և հարստահարելու մասին զգուշացնում է Սողոմոն իմաստունը՝ ասելով այսպես. «Մի՛ բռնացիր աղքատի վրա, որովհետև նա խեղճ է, և մի՛ անարգիր տնանկին դատարանի մեջ» (Առակ. ԻԲ 22): Ս. Գիրքն արգելում է գործատերերին՝ մշակների և տնանկների օրական վարձն իրենց մոտ պահելը մինչև մյուս օրը. «Մի՛ զլացիր վարձ տալ քո աղքատ ու կարիքավոր եղբայրներին կամ քո քաղաքներում գտնվող եկվորներին. նույն օրը տո՛ւր նրա վարձը, քանի դեռ արևը մայր չի մտել, որովհետև նա տնանկ է, և դա է նրա հույսը» (Բ Թրին. ԻԴ 14-15), «Քո ընկերոջը մի՛ զրկիր իր իրավունքից և նրա ունեցածը մի՛ հափշտակիր: Վարձկանի վարձը

մինչև հաջորդ առավոտ թող քեզ մոտ չմնա» (Ղևտ. ԺԹ 13): Երանի կլիներ բոլոր գործատերերին, եթե առանց ձանձրանալու շտապեին կատարել այս բարոյական օրենքը, որով կապահովեին արդար և օրինավոր ապրուստի համար տքնող և չարչարվող խեղճ բանվոր դասակարգի կյանքը:

Գ. Խաբեբայություն. այն է, երբ մարդը, խաբելով իր ընկերոջը, սուտն իբրև ճիշտ է ներկայացնում նրան, և շահ բերելով իր անձին՝ վնասում է նրան:

Ղ. Գողություն. այն է, երբ մարդ գաղտնի կերպով հափշտակում է ընկերոջ ունեցվածքը կամ սեփականությունը, և հափշտակած իրն անհայտության մեջ պահելով՝ յուրացնում է, և երբ մի դիպվածով հայտնվում է գողոնը, նա բացարձակ ուրանում է իր գողության փաստը:

Ե. Հատուցողական գողություն. այն է, երբ մարդն իր վերցրած պարտքը բոլորովին ուրանում է՝ իբրև անպարտ, և չի հատուցում:

Զ. Գործակցական գողություն. այն է, երբ մարդը, թեպետ ինքը չի գողանում, սակայն գործակից և համախոհ է իր ընկերոջ գողությանը, չարիքներին և վնասներին, որ պատճառում է ուրիշներին. այդպիսիք, ըստ Սողոմոնի, ատում են իրենց անձը

կամ հոգին. «Ով բաժնեկից է դառնում գողերին, նա ատում է իր հոգին» (Առակ. ԻԹ 24):

Է. Վկայաբանական կամ երգմնական գողություն. այն է, երբ մարդն իր վկայություններով և սուտ երգումներով աշխատում է արդարացնել ընկերոջ, ծանոթի կամ բարեկամի գողությունը՝ իր անձնական շահերի համար:

Ը. Ստացական գողություն. այն է, երբ մարդն իր պարտքով կամ շահով տված դրամների ստացման ժամանակ չափից և պայմանից դուրս շահ է պահանջում կամ իր տվածի քանակությունը բազմապատկում է և կրկնապատկում՝ սուտ երգմամբ, և եթե հաջողվում է իրեն, այն ժամանակ խեղճ պարտապանը ստիպված է լինում կրկնակի հատուցել:

Թ. Արգելական գողություն. այն է, երբ մարդ արգելում է փոխատվությունը կարոտյալին՝ նրա վերաբերյալ զանազան կասկածներ հայտնելով, որոնք խեղճ կարոտյալի հանդեպ իր կրքի և ատելության պտուղն են, և իր այս շարագործությամբ վնասում է թե՛ տվողին և թե՛ ստացողին՝ տվողին զրկելով իր շահից և ստացողին՝ իր կարիքները հոգալուց, մեկի շահն ու օգնությունն է գողանում և մյուսի՝ կյանքի անհրաժեշտ կարիքների լրացումը:

Ժ. Գնողական կամ վաճառողական կամ առևտրական գողություն. այն է, երբ վաճառողը ծախում

է անպետքը՝ իբրև պետքական, իսկ էժանագինը՝ իբրև թանկարժեք, իսկ գնողը, օգուտ քաղելով ծախողի անփորձությունից, պիտանին անպետք է համարում, իսկ թանկարժեքը երդումներով հաստատում է իբրև էժանագին և գնում է ծախողից չնչին գնով: Առևտրական հարաբերությունների մեջ շատ հաճախ պատահող այս անիրավությունն արգելում է Ս. Գիրքը. «Եթե որևէ մեկն իր մերձավորին որևէ բան է վաճառում կամ իր մերձավորից որևէ բան է գնում, թող նրան չխաբի» (Ղևտ. ԻԵ 14), «Անիրավություն մի՛ արեք նաև չափելու, կշռաքարերի ու կշռելու մեջ» (Ղևտ. ԺԹ 35):

ԺԱ. Երաշխավորական գողություն. այն է, երբ մեկը երաշխավոր է հանդիսանում փոխատվության, հատուցման և այլ դաշինքի մեջ, և երբ լրանում է կամ հասնում հատուցման ժամանակը, հատուցումն ըստ օրենքի և պայմանավորված երաշխավորության չի կատարում, որովհետև երաշխավորն ընդդեմ խղճի և ի վնաս ընկերական շահերի՝ ուրանում է կամ փոփոխում իր երդմամբ հաստատած երաշխավորությունը:

ԺԲ. Կտակակատարական գողություն. այն է, երբ կտակակատարը կտակողի կամքին հակառակ է տնօրինում նրա կտակը. նա ոտնահարում է ընդհանուրի կամ մեծամասնության օրինավոր շահը և օգուտը՝ պաշտպանելով իր անհատական շահերը:

Այս տխուր երևույթը շատ հաճախ է պատահում մեզանում. պատճառը դաժան ազահուլթյունն է:

ԺԳ. Փոխատվական կամ տոկոսային գողություն, այն է, երբ փոխատուն բոլորովին ուշադրություն չդարձնելով իրեն դիմողի կամ իրենից փոխ ուզողի խղճալի դրությանն ու վիճակին՝ ամենեկին չի խղճում նրան մազաչափ անգամ, և տոկոս տոկոսի վրա բարդելով՝ դժվարացնում և ծանրացնում է փոխառուի համար իր դրամի և տոկոսների հատուցումը: Ցանկալի է, որ այս փոխատուները միաժամանակ լսեին և հավանեին Դավիթ մարգարեի խոսքը. «Իր արծաթը վաշխով չի տալիս, իրավունքի դեմ կաշառք չի առնում: Ով անում է այս, նա հավիտյան չի սասանվի» (Սաղմ. ԺԴ 5): Այս մասին Ս. Դիրքը ևս խրատում է այսպես. «Եթե արծաթ ես փոխ տալիս աղքատ եղբորդ, նեղը մի՛ գցիր նրան և տոկոսներ մի՛ պահանջիր նրանից» (Ելք ԻԲ 25):

Գողության տեսակները շատ բազմադիմի են, սակայն օգուտ քաղել ցանկացողներն այս համառոտ անդրադարձներով կարող են բավականանալ:

Գողության գլխավոր շարժառիթները ծուլությունը և ազահուլթյունն են. ծուլերին կամ անգործ պարապորդներին խելացի խրատ է տալիս Սողոմոն իմաստունը՝ ասելով. «Մրջյունի մո՛տ գնա, ո՛վ ծուլ, նախանձի՛ր նրա գործերին և իմաստո՛ւն եղիր նրանից ավելի. քանզի նա ո՛չ հողագործ է, ո՛չ վերակացու և ո՛չ էլ գլխին տեր ունի, բայց ամռանը նա

պատրաստում է իր ուտելիքը և հնձի ժամանակ ամբարում է իր առատ պաշարը: Կամ մեղվի մոտ գնա, տես, թե ինչպես գործունյա է նա և թե ինչպիսի ջանասիրովեամբ է գործում, որի վաստակը մատուցում են թագավորներին և տնանկներին՝ բժշկության համար: Թեպետև թույլ է ուժով, բայց սիրելի է ու մեծարելի բոլորի համար, որովհետև ինքը հարգեց իմաստությունը և արժանի եղավ հարգանքի:

Մինչև ե՞րբ պիտի գամված մնաս, ո՛վ ծուլ, կամ ե՞րբ պիտի զարթնես քնից: Մի քիչ քնով ընկնես, մի քիչ նստես, մի քիչ ննջես, մի քիչ էլ ձեռքերդ հանգչեցնես կրծքիդ, և, ահա, աղքատությունը, ինչպես շար ուղևոր, կհասնի քեզ, և կարիքը, իբրև ժիր սուրհանդակ, կկանգնի դռանդ» (Առակ. 26-11): Այնպիսի անգործությունը, որ առիթ է գողության, արգելում է նաև առաքյալը՝ ասելով. «Ով գողանում էր, այլևս թող չգողանա, այլ մանավանդ թող աշխատի իր ձեռքերով բարիք արտադրել, որպեսզի կարո՞ղ լինի տալու նրան, ով կարիքի մեջ է» (Եփես. Դ 28):

Իսկ ինչ վերաբերում է ազահությանը, պետք է ասել, որ դա մի այնպիսի դժոխային ցեց է, որ ուտում է մարդու ներքին հոգևոր կյանքը՝ մի որևէ մարմնական օգտի և շահի համար, ինչպիսին էր Հուդա Իսկարիովտացին, որ երեսուն արծաթի ազահությամբ շաղախված և վարակված, ուրանա-

լով իր Երկնավոր Ուսուցչի և Տիրոջ երեք տարվա մտերմական քաղցրությունը, բարիքը և դաստիարակող ու ազնվացնող անթիվ-անհամար խոսքերն ու գործերը՝ մատնեց տիրասպան հրեա ազգին: Որքան մեծ է ագահության հանցանքը, այնքան էլ ծանր է նրան պատուհասող սպառնալիքը, որն Աստծո արքայության ժառանգությունից զրկվելն է, ինչպես ուսուցանում է առաքյալը. «Չգիտե՞ք, թե անիրավներն Աստծու արքայությունը չեն ժառանգում. մի՛ խաբվեք... ո՛չ գողեր, ո՛չ ագահներ...» (Ա Կորնթ. Զ 9-10): Գողության հանցանքը քավելու երկու պայման կամ միջոց կան. ա. առ Աստված կատարյալ զղջում, բ. գողության լիովին հատուցում մարդուն:


Ա. Առ Աստված կատարյալ զղջումն այն է, երբ մարդ, սիրելով աշխատանքը և պահելով չափավորության կանոնը, խոստանում է Աստծուն և ուխտում՝ չսեփականել իրեն մյուս անգամ այն, ինչ որ ուրիշինն է:

Բ. Լիովին հատուցումը մարդուն այն է, երբ գողոնը, առանց պակասեցնելու, մինչև անգամ ավելացնելով, պետք է վերադարձնի տիրոջը՝ նմանվելով Ս. Ավետարանի մեջ հիշատակված Զաքեոս մաքսավորին, որ ասաց Հիսուսին. «Տե՛ր, ահա իմ ինչքերի կեսը կտամ աղքատներին, և եթե որևէ մեկին զրկել եմ, քառապատիկ կհատուցեմ» (Ղուկ.

ԺԹ 8): Իսկ եթե այլևս ողջ չեն այն անձինք, որոնց զրկել էր գողը, նա պետք է հատուցի ժառանգներին, եթե նրանք ևս չկան՝ մերձավոր արյունակիցներին, եթե չկան և այս վերջինները, այնժամ գողոնը, ըստ Ս. Գրքի, հասնում է Աստծու պաշտոնյային, որ է քահանան. «Եթե վնաս կրած մարդը մերձավոր որևէ մեկը չունի, որ նրան հատուցի իր պատճառած վնասը, ապա հանցանքի դիմաց Տիրոջը հատուցածը թող պատկանի քահանային» (Թվ. Ե 8): Իսկ եթե չի կամենում քահանային հատուցել, այդ դեպքում պետք է նվեր անի կարոտյալներին կամ որևիցե բարեգործական նախագծի:



ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆ



«Քո հարևանի դեմ սուտ վկայություն
մի՛ տուր» (Ելք Ի 16)

Այս պատվիրանն արգելում է ընկերոջ մասին սուտ վկայություն տալը՝ պաշտպանելով ճշմարտությունը և արդարությունը, որով մարդկանց միջև հաստատված ընկերական հարաբերությունը լինում է հիմնավոր և հաստատուն, տևական և հզոր, պատվելի և սիրելի:

Ինքնին վկայությունն ավելորդ է, եթե մարդկային հարաբերությունները հիմնված են անկեղծ սիրո և համակրանքի հիմնաքարի վրա, եթե մարդկանց կենցաղավարական հարաբերությունն ունի ա՛յն կատարելությունը՝ իբրև նշանաբան, որը ցանկանում է և պատվիրեց Հիսուս իր գերագույն վարդապետությանը աշակերտողներին. վկայությունը գին և նշանակություն չունի՝ հավատընծա, անկեղծ և ճշմարիտ հարաբերությունների պարագայում, իսկ եթե անհրաժեշտություն կա վկայության, դա պարզ ապացույց է մարդկանց՝ իրար հետ ունեցած հարաբերությունների մեջ հավատի

և զգոնություն խախտման, ճշմարտության՝ թուլության և կատարելության՝ բոլորովին բացակայության:

Ուրեմն՝ եթե վկայությունն ինքնին ավելորդ է, ապա ո՞ւր կմնա սուտ վկայությունը, որ չարաչար հանցանք է վկայողի համար և վնաս՝ կարծեցյալ հանցավորի համար, և իրավամբ, դա մարդասպանություն է, որովհետև այդ հանցանքի կամ ախտի շարժառիթներն են գլխավորապես՝ կաշառակերությունը և ապա՝ նախանձը, ատելությունը, մոխրի տակ ծածկված և միշտ բորբոքվելու պատրաստ հին վրեժը կամ ոխը, թշնամական հարաբերությունները, երբեմն նաև պատվի և բարեկամական հանգամանքները:

Դատավորի աթոռի առաջ կանչված սուտ վկան զգուժ է, որ իր վկայությունը պիտի լինի ընդդեմ խղճի օրենքների, մարդասիրական գաղափարի և ճշմարտության ձայնի, սակայն ի՞նչ օգուտ, եթե նա խեղդում է իր մեջ այդ բոլորը, որովհետև մամոնան գերել է նրա սիրտը, կաշառքը կուրացրել է նրա հոգևոր տեսողության աչքը, նախանձը և ատելությունը, վրեժխնդիր քենը կամ ոխը հուզել են արդեն իր ամբողջ ներքին աշխարհը և թունավորել են ճշմարտությունը, որի ձայնը նա ընդունակ չէ լսելու այդ միջոցին: Այդ կեղեքիչ և սպանող կրքերը նրան մոռացնել են տալիս այն սերն ու կարեկցանքը, որոնք նա պետք է տածի

իր ընկերոջ հանդեպ: Նա այդ բոլորը մոռանում է այդ միջոցին և մղելով իր գաղտնի պատերազմն ընկերոջ դեմ իր սուտ վկայությամբ՝ կործանում է նրան, սպանում է կարծեցյալ հանցավորին, որ բոլորովին անմեղ է: Արդյոք սուտ վկայությամբ չէ՞ր, որ հանցավոր և մեղավոր ճանաչվեց Պիղատոսի ատյանի առաջ՝ անմեղության, ճշմարտության և արդարության Մեծ Հեղինակ Հիսուսը:

Արդարության օրենքը և ճշմարիտ իրավունքը թույլ չե՞ն տա արդյոք սուտ վկայությունը հավասար համարել չարագործ մարդասպանությանը. այո՛ և միանգամայն անկասկած, որովհետև, նախ, սուտ վկայության նպատակը ուրիշի վնասն է, անկումը, դժբախտությունը, զրկանքը, և բացի այս հոգևոր մահից՝ հաճախ նույնիսկ մարմնավոր մահ: Երբ մարդն անմեղ է, սակայն դատաստանական վճռով հանցավոր է ճանաչվում՝ սուտ վկաների շնորհիվ, բոլորովին հուսահատվում է և հուսահատ մտատառանջությամբ կամ ինքնասպանությամբ վերջ է դնում կյանքին կամ անդադար մտածելով՝ տկարանում է և ո՛չ մի բժշկական օգնություն չի կարողանում այլևս վերականգնել նրա նախկին առողջությունը: Եվ, ահա, նա մահվան անկողնում պատրաստվում է տանել իր բողոքն Արդարադատի առաջ՝ անարդար դատավորներից և սուտ վկաներից: Ի՞նչ պիտի պատասխանեն նույն Արդարադատ և Անաչառ Դատավորի

ահարկու դատաստանական աթոռի առաջ երկրա-
յին դատավորները և սուտ վկաները, թող մտածեն
և պատրաստեն իրենց պատասխանատվության
հաշիվը, որովհետև այդ դատաստանն անխուսա-
փելի է, և երկրորդ՝ սուտ վկայությունը բոլորովին
հակառակ է աստվածային ճշմարտության օրեն-
քին, որովհետև նույնիսկ վկայությունը հավատի
պակասության ապացույցն է. եթե մարդկանց հա-
րաբերությունների մեջ հավատ և ճշմարտություն
լինեին, չէր զգացվի վկաներին դիմելու կարիքը,
բայց քանի որ բացակա է մարդկանց փոխադարձ
հավատը, և խեղված է ճշմարտությունը, ուստի և
առաջ է եկել վկայությունը, որպեսզի գործերն ու
խոսքերը հաստատություն և վավերականություն
ստանան: Եթե մարդկանց մեջ ճշմարիտ և հա-
վատավոր հարաբերություն լիներ, վկայության
կարիք չէր լինի, խոսքերն ու գործերը կլինեին
ճշմարիտ, և մարդիկ, անկասկած, կհավատային
միմյանց: Ուրեմն՝ վկայությունը հավատի պակա-
սության կամ բացակայության ապացույցն է և
փոքրագույն չարիք, որովհետև նպատակը անձ-
նական շահն է և ընկերոջ կորուստը և մինչև ան-
գամ՝ մահը, հետևաբար, ամենայն իրավամբ, մար-
դասպանություն է սուտ վկայությունը:

Վկայությունը նույնն է, ինչ որ գրավը, երգու-
մը և պարտատոմսերը, որոնք արդյունք են մարդ-
կանց ճշմարիտ և հավատավոր հարաբերություն-

ների խախտման, բայց ժամանակը պահանջում է, կասեն շատերը, սակայն չէ՞ որ ժամանակի գործադիրը ևս մարդն է: Ժամանակն ինքնին ոչ մի ներգործություն չի կարող ունենալ մարդու խղճի օրենքների վրա, ժամանակը մի հոսանք է, ընթացք, որ կապ չունի մարդկային հանճարի կամ աստվածային օրենքների հետ, ուրեմն՝ ժամանակն իրավունք չունի փոխելու այն բնական օրենքը, որ Աստված ի բնե դրել է մարդու մեջ՝ իբրև նրա առաջնորդ՝ կյանքի բազմատեսակ հանգամանքներում. այդ բնական օրենքը կամ այդ առաջնորդը խղճմտանքն է, որ իբրև արդար դատավոր՝ ցույց է տալիս մարդուն չարը և բարին, օգտակարը և վնասակարը, ոգևորում է և քաջալերում բարի և օգտակար գործողություններում և խթում¹ ու հանդիմանում է չար և վնասակար գործերի համար: Ուրեմն՝ ժամանակը մեղավոր չէ և չի կարող լինել. մեղավոր է մարդը և միշտ մեղավոր, հանցավոր և ապերախտ, որ ի տրիտուր Ամենաբարի Արարչի մեծ բարիքներին՝ իր ամբողջ կյանքում զբաղված է չար հատուցումների պատրաստությամբ, այն է՝ չի ստորադրվում խղճի օրենքներին, որ է Աստծու ձայնը, չի հպատակվում աստվածային կամքին և պատվիրաններին, որ ամբողջ ճշմարտության սկզբնապատճառն է, և

¹ Մտրակով ձիուն բզել, բոթել, մշտել:

չի՛ սիրում, կարեկցում և օգնում ընկերոջը, որն իր կյանքի միակ պայմանն ու նպատակն է, որի նշանակութունը վսեմանում է մեր առջև, երբ հիշում ենք առաքյալի խոսքը սիրո մասին. «Եթե խոսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ ղողանջում են» (Ա Կորնթ. ԺԳ 1): Սիրո վսեմության մասին ավելորդ է երկար խոսելը, քանի որ չկա մի անհատ, որ ուրանա նրա բարձր նշանակութունը և անհրաժեշտ կարևորությունը կյանքի մեջ, որովհետև կյանքը, որ առանց սիրո է, նա մեռած է բարոյապես: Այս սերն է, որ Հիսուս «օրենքների լրում» անվանեց, որովհետև բոլոր օրենքների լրացուցիչն է: Այս սերն է, որ Հիսուս իր խաչի հետ միասին որպես նշան դրոշմեց իր աշակերտների ճակատին՝ ասելով. «Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն եք» (Հովհ. ԺԳ 35), և վերջապես՝ այս գերագույն սերն է, որ իբրև անլուծանելի կուռ շղթաների օղակապ՝ պետք է շրջապատի տիեզերքի ոլորտը, որ տիեզերքն իր ամբողջության մեջ մնա և չլուծվի, չբայցքայվի: Սիրո հաստատուն և անդրդվելի սյան վրա են իրենց վայելչության շրջանն ու պտույտն ստանում տիեզերքն ու կյանքը: Եթե այս սերն է թագավորում տիեզերքին տիրապետող գահի վրա, որ է մարդու բարձր հանճարը, այնժամ մարդը հասնում է իր

կատարելությանը կամ աստվածանմանությանը, որովհետեւ այդպէս մեզ ուսուցանեց հանճարների Տերը՝ ասելով. «Արդ, կատարյալ եղեք դուք, ինչպէս և ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. Ե 48): Եվ ուրեմն՝ ինչպէս ամեն մեղք ու հանցանք, չարիք և վնասներ, նույնպէս և սուտ վկայությունն է պտուղ և արդյունք այդ ընկերական գերագույն սիրո բացակայության:

Անմեղին մեղավոր հանելու սուտ վկայությունը երեք տեսակ չարագործություն է պարունակում իր մեջ. չարագործություն Աստծու դեմ՝ նրա հայրական սերն արհամարհելով և դատավորական երկյուղն անարգելով, չարագործություն խղճի դեմ՝ նույն խիղճն իր մեջ մեռցնելով ու սպանելով, չարագործություն ընկերոջ դեմ՝ նրա անմեղությունը սուտ հանելով, հանցավոր կերպով վկայելով իր անձնական շահերի կամ կրքերի համար միայն: Մինչդեռ մարդը՝ իբրեւ ընկերական էակ, պարտավոր է հաճախ և գրեթե միշտ, անհրաժեշտ դեպքերում կյանքը տալ իր անկենդան ընկերոջը, կամ ավելի պարզ ասած՝ զոհաբերել իր անձնական շահերն ընկերոջ և նրա անմեղության հաստատման օգտին, քանի որ սա է ընկերության պայմանը, այլապէս՝ մարդուն վայել է ոչ թէ ընկերական արարած անվանել, այլ՝ գիշատիչ գազան, որը, հանուն իր որկորը լցնելու, պատրաստ է պատռել իր նմանին և հավասարին:

Այս իսկ է պատճառը, որ Ս. Գիրքը լի է դատավորներին զգուշացնող և զգաստացնող խրատներով, իսկ սուտ վկաներին՝ խիստ օրենքով դատապարտող արհավրալի սպառնալիքներով. «Եվ դատավորները պետք է արդարությամբ քննեն գործը: Եթե հաստատվի, որ վկան սուտ վկայություն տալով է մեղադրել իր եղբորը, ապա նրա նկատմամբ կկիրառեք այն պատիժը, որ նա մտադիր էր հասցնել իր եղբորը: Դրանով չարը կվերացնեք ձեր միջից» (Բ Օրին. ԺԹ 18-19): Սուտ վկայությունը կարելի է անվանել ստախոսություն և բամբասանք կամ չարախոսություն, որոնք առաջ են գալիս խարդախությունից կամ նենգությունից, չարությունից կամ անօրենսությունից և այլ բազմադիմի մեղքերից:

Հիսուս ստախոսին նմանեցնում է սատանային. «Դուք հոր կողմից սատանայի զավակներ եք, և ձեր հոր ցանկություններն եք ուզում կատարել, թեև նա ի սկզբանե մարդասպան էր և ճշմարտության մեջ չմնաց, որովհետև նրա մեջ ճշմարտություն չկար: Երբ որ նա սուտ խոսի, ինքն իրենից է խոսում, քանի որ նա սուտ է և ստի հայր» (Հովհ. Ը 44): Ստախոսների խոսքերը Սողոմոն իմաստունը, ըստ երևույթին, համարում է փաղաքշալից, իսկ ըստ ներգործության՝ պատերազմների առիթ և պատճառ. «Շողոքորթների խոսքերը փաղաքշող են, բայց դառնում են կռվի բուն» (Առակ. ԻԶ 22):

Հիսուս ո՛չ միայն ստախոսությունն է արգելում, այլ մինչև անգամ՝ դատարկ խոսքը և ավելորդ զրույցը, որ օգուտի փոխարեն՝ վնաս է պատճառում ինչպես խոսողին, նույնպես և լսողին, և որի մասին հաշիվ պիտի տան մարդիկ իր դատաստանի առաջ. «Բայց ասում եմ ձեզ, թե մարդիկ իրենց խոսած ամեն դատարկ բանի համար դատաստանի օրը հաշիվ պիտի տան» (Մատթ. ԺԲ 36):

Բամբասողը կամ չարախոսը նույն պատժին է ենթարկվում, ինչին և՛ սուտ վկայողը: Առաքյալը չարախոսի կամ բամբասողի լեզուն նմանեցնում է փոքրիկ, սակայն անտառներ այրող կրակի. «Այսպես էլ լեզուն մի փոքր անդամ է, բայց մեծամեծ բաներ է բարբառում: Ահա թե մի փոքր կրակ ինչպիսի՜ անտառներ է հրդեհում» (Հակ. Գ 5):

Նույն առաքյալը եղբորը կամ ընկերոջը դատելը կամ բամբասելն արգելում է, որովհետև այդպիսի բամբասանքը նա համարում է օրենքի դեմ բամբասել. «Եղբայրներ՛ր, միմյանց մի՛ բամբասեք. ով բամբասում է իր եղբորը կամ դատում է իր եղբորը, չարախոսում է օրենքի մասին և դատում է օրենքը. իսկ եթե օրենքն ես դատում, օրենքը պահող չես, այլ՝ դատավոր» (Հակ. Դ 11):

Դավիթ մարգարեն, լեզվով մեղանչելը համարելով իբրև հանցանք և չարագործություն, իբրև արմատ՝ բոլոր վնասների և խոտորում սրտի՝ չարության խոսքից. «Պահապա՛ն դիր, Տե՛ր, իմ բերանին,

և ամուր դուռ՝ իմ շրթներին, որ սիրտս չհակվի չարության խոսքին» (Սաղմ. ԺՆ 3-4), խոստանում է լեզվով չմեղանշել այլևս. «Ասացի՝ «Ձգուշանամ իմ ճանապարհին, որ լեզվովս չմեղանշեմ» (Սաղմ. ԼԸ 2):

Սուտ վկայությունը, որ մի տեսակ բամբասանք է և որը նույնպես կարելի է մարդասպանություն անվանել, Ս. Գիրքը բացեիբաց մերժում է՝ բացառելով, որ կարող է նաև օգտակար նպատակով լինել. «Ականջ մի՛ դիր սուտ լուրերին: Հանձն մի՛ առ հօգուտ անիրավի անիրավ վկա լինել» (Ելք ԻԳ 1), «Քո մերձավորի մասին սուտ վկայություն մի՛ տուր» (Բ Թր. Ե 20):


Սուտ վկայության պատճառով մահվան դատապարտվեց աշխարհի բարերար և փրկիչ Հիսուս, սուտ վկայությունների ու ստությունների զոհ դարձան հազարավորներն ու բյուրավորները պատմական աշխարհում, որոնց կյանքը փրկություն և լույս էր այն դարում, որում ապրում էին նրանք, որոնք բարիք և օգուտ էին մատակարարում այն հասարակությանը, որին գլխովին նվիրված էին իրենց կյանքով, հաստատության հիմնաքարեր էին սուրբ եկեղեցիների, որոնց մեջ Արարչի սուրբ անունն էր փառավորվում, մարդկային ընկերության, սիրո և սուրբ հարաբերության անսասանելի սյուներ էին, որոնցից և ակնկալվելու էին ազգերի կյանքի ապահովությունն ու բա-

րօրությունը, բայց, ավա՛ղ, նրանք պարտվեցին ստության հարվածներից, ընկճվեցին սուտ վկայություններից, և կեղծավորությունը կամ շողոքորթությունը, բամբասանքը կամ շարախոսությունը, որոնք բոլորը մի խոսքով կարելի է անվանել լեզվասպանութուն, տապալեցին այդ ամբողջ բարիքը և սպանեցին և իրավամբ նմանվեցին Դավիթ մարգարեի հիշատակած սուր ածելիին. «Սուր ածելու նման նենգութուն գործեց: Բարությունից ավելի չարություն սիրեց և արդար խոսքից ավելի՝ անօրենսություն» (Սաղմ. ԾԱ 4-5):

Ուրեմն՝ իններորդ պատվիրանն արգելում է ստախոսությունը, սուտ վկայությունը, շարախոսությունը և բամբասանքը, որոնք ծնվում են ատելությունից, վրեժխնդիր ռիսակալությունից, ընչասիրությունից կամ ագահությունից:



ՏԱՍՆԵՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆ



«Ո՛չ քո մերձավորի տան, ո՛չ նրա
ազարակի վրա աչք մի՛ ունեցիր»
(Եւք Ի 17)

Այս պատվիրանն արգելում է աչք ունենալ ընկերոջ ունեցվածքի վրա և նրա ունեցվածքը յուրացնելու ջանքեր անել՝ պաշտպանելով աշխատանքը և ամենավսեմ չափավորությունը, որոնք մարդու օգտակար և արդար կյանքի ամենամեծ պայմաններից են:

Աչքով և սրտով ցանկանալը, մի տեսակ, ևս գողությունն է: Ամեն չարություն և բարություն, գարշություն և սրբություն ծնվում են սրտից, ուստի և սրտի պահպանության խրատն է տալիս մեզ փորձված իմաստունը. «Ամենայն զգուշությամբ պահի՛ր և պահպանի՛ր քո սիրտը, որովհետև նրանից է բխում կյանքի աղբյուրը» (Առակ. Դ 23): Իսկ սրտագետ Հիսուս խոստանում է աստվածային տեսության մեծ երանությունը նրանց, որոնք իրենց սիրտը սուրբ են պահում ամեն աղտեղություններից և չար ցանկություններից. «Նրա՛նի

նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. Ե 8): Որովհետև սիրտն է, որի մեջ ամբարված են ամեն տեսակ չար խորհուրդները և չարությունները և այնտեղից են ծնվում, ինչպես ուսուցանում է մեր Փրկիչը. «Քանի որ սրտից է, որ ելնում են չար մտքեր, խորհուրդներ, սպանություններ, շնություններ, պոռնկություններ, գողություններ, սուտ վկայություններ, հայհոյանքներ» (Մատթ. ԺԵ 19): Դավիթ մարգարեն, շատ խորը թափանցելով սրտի գաղտնիքների մեջ, կարծելով, որ սիրտն է ամեն բարի և չար խոկումների և ցանկությունների անտեսանելի խորհրդարանը, որի վճիռները գործադրում է մարդը իրական կյանքում, ուստի և իր՝ առ Աստված սաղմոսերգությունները լցրել է սրտի և հոգու վերաբերյալ պես-պես հայցվածներով. «Սիրտս հակի՛ր դեպի քո պատվիրանները և ոչ թե՛ դեպի ազահություն» (Սաղմ. ՃԺԸ 36), «Մաքուր սի՛րտ ստեղծիր իմ մեջ, ո՛վ Աստված, և ուղիղ հոգի՛ նորոգիր իմ ներսում» (Սաղմ. Մ 11), «Ես գոհություն պիտի մատուցեմ քեզ, Տե՛ր, ուղիղ սրտով, սովորելով քո արդար դատաստանները... Քո խոսքերը սրտումս թաքցրի, որ չմեղանչեմ քո դեմ» (Սաղմ. ՃԺԸ 7, 11):

Ինչպես սիրտն անտեսանելի խորհրդարան է՝ բարի և չար խոկումների և ցանկությունների, նույնպես և աչքն արտաքին անոթ է՝ բարի և չար ցանկությունն իր մեջ բովանդակելու և հաղորդե-

լու սրտին, ուստի՝ մեծ պահպանություն է հարկավոր նաև աչքին, ինչպես Աստուծոց հայցում է Ներսես Շնորհալին. «Ամենախնամ Տեր, Քո սուրբ երկյուղը պահպանի՝ դիր աչքերիս՝ այլևս անպատկառ չնայելու... սրտիս՝ չարը չխորհելու... այլ ուղղի՛ր սրանց ընթացքը՝ միշտ լինելու ըստ Քո պատվիրանների»։ Աչքը Հիսուս համարում է մարմնի ճրագ, որի լույսով սիրտն իր մեջ պիտի առնի բարին և չարը։ Հարկավոր է, որ աչքը չգայթակղվի իր լույսի մեջ, որպեսզի մեղքի խավարը չտիրի մարմնին և հետևապես՝ սրտին, ինչպես ասում է. «Մարմնի ճրագը աչքն է. եթե քո աչքը պարզ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի։ Իսկ եթե քո աչքը պղտոր է, քո ամբողջ մարմինը խավար կլինի։ Եվ արդ, եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա խավարը՝ որչա՛փ ևս ավելի» (Մատթ. Զ 22-23)։ Դավիթ մարգարեի բնորոշմամբ՝ մարդու աչքը մեծ և վսեմ առաքելություն ունի, որի կատարմամբ՝ աչքն առատ կլինի՝ ըստ Հիսուսի։ Աչքը, ըստ Դավթի, պետք է նայի և տեսնի Աստծո օրենքների սքանչելիքները և հրաժարվի աշխարհի նանրություններն ու ունայնությունները տեսնելուց, որով և սիրտն ազատ կմնա գայթակղությունից. «Բա՛ց իմ աչքերը, որ տեսնեմ քո օրենքի հրաշալիքները» (Սաղմ. ԺԺԼ 18), «Շրջի՛ր աչքերս, որ ունայնություն չտեսնեմ, ինձ պահպանի՛ր քո ճանապարհին» (Սաղմ. ԺԺԼ 37)։

Յանկանալ ունենալ այն, որն իրենը չէ, կամ ուրիշի սեփականությունը տիրելու և յուրացնելու փափագը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ գողություն և ամենամեծ ազահույություն, որը, ամենայն իրավամբ, դեմ է չափավորության և աշխատասիրության պատվելի օրենքին: Ուրիշի ունեցածի վրա աչք դնելը նույնն է թե՛ իր ունեցածն ատել, չսիրել: Ուրիշների սեփականությունը ցանկանալը նույնն է, ինչ իր սեփականությունից զզվելը: Ընկերոջ ինչքը յուրացնելու փափագը նույնն է, ինչ իր ունեցվածքով չբավականանալ կամ որ նույնն է՝ ազահույություն: Ուրիշի աշխատանքով ապրելու կամ ապահովելու ցանկությունը նույնն է, ինչ աշխատանքն ատելն ու ծուլությունը սիրելը:

Սակայն, ցանկությունը և փափագը կարող են երկու տեսակ լինել. առաջին և ազնիվ տեսակն է յուրացնել կամ սեփականացնել ուրիշների առաքինի հատկությունները, որոնք են աստվածասիրությունը, ընկերասիրությունը, չափավոր կենցաղավարությունը, համբերող և ներողամիտ բնավորությունը, գթոտ սիրտը, կարեկից հոգին, աշխատասեր և անհուսահատ կամքը, պարզ և անխաղաղախ հարաբերությունն ընկերության մեջ և այսպիսի շատ այլ ազնիվ և օգտակար հատկություններ: Այս առաջին տեսակը ամեն մի անհատի պարտականությունն է: Տասներորդ պատվիրանը չի արգելում այսօրինակ ցանկություններն ու փա-

փագները, այլ այն արգելում է երկրորդ տեսակը, որ վնասակար է թե՛ մեզ և թե՛ մեր ընկերներին. մեզ, որ գործում ենք ընդդեմ աստվածային օրենքի և խղճի օրինավոր ցուցումների, և ընկերոջը, որ ցանկանում ենք հագեցնել մեր չար փափագը ընկերոջ զրկանքով կամ վնասով:

Այս երկրորդ տեսակի ցանկությունը կամ փափագն արթնացնում է մեր մեջ անգործության կամ ծուլության և ազահության վնասակար ախտեր: Սրանցից են առաջ գալիս գողությաններ, ավազակություններ, հափշտակություններ և ամեն տեսակ զրկանք, որովհետև ինչո՞ւ աշխատենք, քանի որ միջոց ունենք և հնար՝ ուզած ժամանակ ուրիշների սեփականությունը մեզ հատկացնելու, մեր ձեռքը գցելու, տիրապետելու և վայելելու: Պատճառ է դառնում և ազահության. ինչո՞ւ բավարարվենք մերով, քանի որ միջոց ունենք ուրիշի վաստակով մեր ունեցածը կրկնապատկելու և քառապատկելու: Պատճառ է դառնում անբարոյականության և անհավատարմության. ինչո՞ւ հավատարմության և բարոյականության ծանր թվացող պարտքերի տակ ճնշվենք, միշտ միօրինակ կենցաղ վարենք, քանի որ կարող ենք ընտանեկան կամ ամուսնական կյանքի մեջ մեր հավատարիմ և բարոյական հարաբերությունը ոտնակոխ անելով՝ պղծել ու պղծվել անբարոյական շրջապատում: Պատճառ է դառնում շռայլության և աղքատության. ինչո՞ւ

բավարարվել անշուք, չափավոր և պարզ կենցաղավարությամբ, քանի որ միշտ ունենք մեր դատած կոպեկները կամ արծաթները տասնյակներով, հարյուրներով և հազարներով քամուն տալ՝ ուրիշների նման, որպեսզի մեր կենցաղավարությունը ևս լինի շքեղ, փառավոր և շոալ:

Ուրեմն՝ ուրիշի կյանքը և ունեցածը ցանկանալը, որն արգելում է տասներորդ պատվիրանը, չարաչար վնաս է ինչպես ցանկացողին, նույնպես և նրան, որի ունեցածը ցանկանում են, և սա էլ գողության մի տեսակ է:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրապարակության առթիվ 5

Տասը պատվիրանները
կամ

Բարոյական պարտացույց

Երկու խոսք	11
Ուղերձ	15
Առաջին պատվիրան	17
Երկրորդ պատվիրան	26
Երրորդ պատվիրան	38
Չորրորդ պատվիրան	47
Հինգերորդ պատվիրան	57
Վեցերորդ պատվիրան	67
Յոթերորդ պատվիրան.....	82
Ութերորդ պատվիրան	90
Իններորդ պատվիրան	110
Տասներորդ պատվիրան	121

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՐՄԵՆ ՔԱՀԱՆԱ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

ԿԱՍ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱՑՈՒՅՑ

Ս. ԷԶՄԻԱՇԻՆ - 2022

Հրատարակչության
տնօրեն՝

Հրատարակչության
գլխավոր խմբագիր՝

Հրատարակչական
խորհրդի անդամներ՝

Սրբագրիչ՝
Էջադրումը՝

Տ. Արարատ քահանա
Պողոսյան

Սարգիս Մելքոնյան

Տ. Մկրտիչ եպս. Պռոշյան,
Տ. Ռուբեն վրդ. Չարգարյան,
Տ. Ասողիկ աբդ. Կարապետյան,
Տ. Արարատ քին. Պողոսյան,
Տ. Գաբրիել քին. Վարդանյան,
Գևորգ Տեր-Վարդանյան,
Կարեն Մաթևոսյան

Ս. Գրիգորյան
Ղևոնդ ավ. քին. Մայիլյանի

ISBN 978-9939-59-294-7



9 789939 592947

